



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



[ 6 NOV 2011

1902 ՅԵՂԻ

91.99  
Ն-40


ՆԱՐԻՈՍ

151  
800

# ՏԱՆՏԻՐՈՋՍ ԱՂԶԻԿԸ

Վ Ի Պ Ա Կ

ՀՐԵՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԼՈՅՍԻ



Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան Մովսես Վարդանեանցի.

Тип. М. Вартамянца, Гановская ул. № 3.

1902

26 FEB 2013

46248

# ՏԱՆՏԻՐՈՋՍ ԱՂԶԻԿԸ

Վ Ի Պ Ա Կ

I.

Доз. цензурою г. Тифлисы, 1 августа 1902 г.

Ես հայ ուսուցիչ եմ՝  
Կարծեմ, սրանով շատ բան ասացի,—ասացի  
այն ամենը, ինչ որ հազար անգամ գրուած է լրագրներում հայ ուսուցչի մասին:

Ամբողջ հինգ տարի գաւառները թափառելուց,  
մի տարի էլ Պարսկաստանում պաշտօնավարելուց  
յետոյ, մի քանի հարիւրներ թողնելով այս ու այն  
հոգաբարձութեան ձեռքին, վերջապէս ինձ աջողուեց  
ոտս Թիֆլիս ձգել: Դա իմ վաղուցուայ տենչանքս էր:

Այն ժամանակ ես քսանհօթ տարեկան էի:

Օգոստոսի վերջն էր: Բոլոր հոգսս այն էր, որ  
մի յարմարաւոր բնակարան գտնեմ: Ամբողջ օրերով  
թրև էի գալիս այս ու այն փողոցը, բնակարան որո-  
նողներին շատ լաւ յայտնի հետաքրքրութեամբ որո-  
նելով գոներէ և լուսամուտների վրայ թղթի փոքրէկ



38 31-84

կատրններ: Ուզում էի, որ բնակարանս մօտիկ լինէր ուսումնարանին, խաղաղ տեղ լինէր և թէյ ու ճաշ տային: Քայց հակառակի պէս եկայ բռնեցի մի այնպիսի սենեակ, որ համ հեռու էր ուսումնարանից, համ սարսափելի աղմկալից տեղ (բակը լիքն էր երեխաններով), համ էլ ոչ թէյ և ոչ ճաշ խոտացան: Մի տկոսք սենեակ տուին ու—պրծաւ: Չմոռանամ գլխաւորն էլ յիշել—սենեակիս վարձն այնքան թանկ էր, որ յետոյ, երբ արդէն ուշ էր, տեսայ, որ բոլորովին շի յարմարում ըիւջէիս՝ Մտածեցի առաջին ամիսը եօլա տանեմ, իսկ յետոյ երկի աւելի յարմարուոր և ձեռնառու պայմաններով սենեակ կարող էի ձարել: Մասամբ դո՛հ էի, որ աղաատել էի հիւրանոցում քաղաքավարի կողովատուելոց:

Տանտէրս հայ էր—թիֆլիսեցի հայ: Թիֆլիսեցի հայ ասելով ուզում եմ ասել Թիֆլիսում ծնուած և սնուած այն հայի տիպաքը, որին,—օրինակի համար եմ ասում,—եթէ Ամերիկայում անգամ հարցնեն թէ որտեղացի է, անպատճառ կտան «քաղքցի», միանկամայն համոզուած լինելով, որ ամերիկացին «քաղքցի» բառը «թիֆլիսեցի» կը հասկանայ: Չար լեզուները պատմում էին, որ աղա Սերգէյը մի անգամ «կուտը էր ընկել» (սնանկացել էր), բայց և այնպէս (թէ հէնց այդ պատճառով) նա բաւական լաւ էր ապրում: Գարձահասակ մարդ էր, ծայրերը բուզած բեխերով և խիստ կանոնաւոր գլխով, որի վրայ մազերը, չնայելով միջին տարիքին, արդէն բոլորովին սպիտակել էին: «Քաղքցու» կապայ էր հագնում երկար թևերով, որոնցից ձախը միշտ ծափ էր տալիս ծնկանը, իսկ աջը հանգչում էր ուսի վրայ:

Սև ամրասի արխալուզի վրայ աչքի էին ընկնում ոսկեջրած արծաթեայ նեղ գօտին և ծոցի գրպանի մէջ հանգչող ոսկի ժամացոյցի ոսկի հաստ շղթան, որը սկսում էր վզից և գօտուց էլ ներքև էր իջնում: Այդ պարանն առհասարակ աղա մարդու տպաւորութիւն էր թողնում ինձ վրայ թէ նրա համար, որ շորը խիստ սաղում էր նրան, և թէ նրա համար, որ վարուել գիտէր և յարգանք ազդող դիրքի մէջ էր պահում իրեն: Առաւօտներն առանց «բարի լուս» և երեկոներն առանց «բարիգուն» ասելու չէր անցնում մօտովս, եթէ հանդիպում էինք իրար: Երբեմն էլ, երեկոները, հրաւիրում էր ինձ պատշգամբում միասին թէյ վայելելու: Լեզուն Թիֆլիսի բարբառն էր, բայց ոչ զուտ Թիֆլիսի բարբառը, որն արդէն մեռնելու վրայ է, այլ խառն գրական բաղմամբիւ բառերով,—հետևանք մեր մտաւոր-հասարակական կեանքի մէջ վերջին քսանամեակում կատարուած զգալի փոփոխութեան: Բայց և այնպէս Թիֆլիսի բարբառին յատուկ արտասանութիւնը գրական բառերն էլ ներկել էր իւր որոշ գոյնով: Դեռևս այն ժամանակ, երբ Ներսիսեան դպրանոցում որդեգիր աշակերտ էի, ճանաչում էի Վանքի աւագ եկեղեցու թիֆլիսեցի մի ծերունազարդ աւագ քահանայի, որը ժամատացութիւնը և պատարագը Թիֆլիսի բարբառով էր կատարում: Տանտէրս խիստ սիրում էր խօսել քաղաքականութիւնից: Նա անգրագէտ մարդ էր, բայց ի վրացերէնից, ուրիշ ոչ մի լեզուով կարգաւ-գրել չգիտէր, բայց ընական առողջ դատող խելք ունէր և խիստ էլ հեռաբարբրուող էր: Մի անգամ ինձ ասաց, որ խանութում ստանում է Թիֆլիսում հրատարա

կուող մի լրագիրը և իւր հաշուապահին կարգացնել է տալիս ու ինքը լսում:

Այդ մարդուն յարգում էի իւր ծանրաբարոյ և վճռական ընաւորութեան համար: Մինչդեռ նրա կէնը, որը ոչ մի խօսք հայերէն չգիտէր, հակակրանք էր ազդում ինձ: Խիստ կոտւարար էր և թունդ էլ անէծքներ գիտէր: Ի դուր չէր, որ նրան գիծ-Գէկէլ էին կանչում: Օրնիրուն նրա զօրաւոր անէծքներն էի լսում, որ նա թափում էր իւր երկխամների գլխին:

Իսկ այդ երկխամների թիւն այնքան շատ էր, և նրանք այնքան շար էին, այնպիսի ազադակ էին բարձրացնում ընդարձակ պատշգամբի վրայ, ուղղակի լուսամուտիս տակ, որ ես արդէն լուրջ կերպով մտածում էի չսպասեմ ամիսը վերջանալուն և գնամ ուրիշ մի խաղաղ սենեակ փնտրեմ ինձ համար:

Քայց...

II.

Սեպտեմբերի վերջերին, մի հիանալի երեկոյ, տանտէրս հրաւիրել էր ինձ իւր հետ թէյ «անուշ տնելու»: Գէպի կենդանորով լիքը բակը նայող պատըշգամբում նստած, մենք հէնց նոր վերջացրել էինք թէյը և շարունակում էինք քաղաքականութիւնից ճառել, մէկ էլ տեսնեմ երեխաները զլսապատառ փողոցից ներս վազեցին բակի դռնից, ներքից գլմնելով հօրը՝ ինչ որ ծուռոց բարձրացրին ու նորից դուրս թռան փողոց:

Նոյն բողբէին բակի դռնից արագ ներս մտաւ

մի օրիորդ ձեռքին ինչ-որ թղթի արկղիկներ և սկսեց վերև վազել պատշգամբի սանդուղքով. նրա փեշերից բռնել և նրա հետ վազում էին երեխաներից երկուսը: Նրա հտեկից բակը մտաւ մի երիտասարդ, շրջապատուած մնացած երեխաներով:

Այդ միջոցին տանից դուրս եկաւ տանտիրոջս կէնը և ամուսնու հետ ընդառաջ գնաց եկողներին: Բարեններ, համրոյրներ, երեխանց ականջ իլացնող ուրախական ճիշեր, վազվզոց—մի խօսքով մի կատարեալ Սողոմ-Գոմոր: Տանտէրս, ըստ երևոյթին, մոռացաւ ինձ, նոր եկողներն էլ ամենեկին ուշադրութիւն չդարձրին ինձ վրայ: Փաստփուսէս հաւաքեցի և քաշուեցի սենեակս, որը տանտիրոջս բնակարանին կից էր, պատշգամբի ծայրում, այնտեղ, ուր բարձրանում էր սանդուղքը:

Նոր եկողներից երիտասարդը, ինչպէս յետոյ իմացայ, տանտիրոջս մեծ տղան էր, իսկ օրիորդը— ազջիկը: Այդ ամառ նրանք Կովկասեան հանքային ջրերն էին եղել գնացած և այդ երեկոյ այնտեղից էին վերադառնում:

Տանտիրոջս այդ մեծ տղան հազիւ երեսուն տարեկան լինէր: Համալսարանի բժշկական մասնաճիւղը նոր էր աւարտել և վերադարձել էր իւր ծննդավայր քաղաքում էսկուլապի պաշտօն կատարելու: Նա լղար էր, մազակալած երեսով. շարժումները ծոյլ մարդու շարժումներ էին. խօսել անգամ, կարծես, այլարում էր. սև աչքերի մէջ ոչ մի կենդանութիւն, գիմազներ մէջ ոչ մի կենդանի շարժում: Ժամանակից շատ վաղ յոգնած, ուժասպառ և

ի բնէ անտարբեր մարդու տպաւորութիւն էր թող-  
նում ինձ վրայ:

Ընդհակառակը, նրա քոյրը տեղն ու տեղը  
կրակ էր, կրակ շարժումներէ մէջ, կրակ քայլուած-  
քի մէջ, կրակ խօսակցութեան մէջ: Ուրախ ժամա-  
նակ, ծիծաղում էր անդադար, դժի նման, իսկ լուրջ  
ժամանակ ժպիտն անպակաս էր նրա դէմքից, մի  
ժպիտ, որ հիանալի մասնահարկեր էր գոյացնում  
նրա թշերքի վրայ: Սիրում էի սենեակիցս ականջ  
դնել նրա թրթռուն, վարակիչ ծիծաղի ելևէջնե-  
րին, նրա կրծքային ձայնին: Տասնեօթ կամ տասն-  
ութ տարեկան էր, միջակից մի քիչ բարձր հասա-  
կով. փոքր ինչ անկանոն կազմուածքով, բայց խիստ  
շնորհալի շարժումներով: Արեւելեան գեղեցկութեան  
մի ուրայն տիպար էր, պինդ դեղձի նման թուխ ու  
թաւուտ դէմքով: Քեխեր էլ ունէր. կարծես ածու-  
խով մի բարակ գիծ էին քաշել նրա վերին շրթուն-  
քի վրայ: Ջարմանալի առատ ու երկայն էին մազե-  
րը, այնքան երկայն, որ երբ հլուսում էր մի գիսա-  
կի մէջ, այդ գիսակի շճայրը հասնում էր մինչև  
կրունկերը: Մի տարի էր, որ աւարտել էր գիմնա-  
դիօնը և գործածական լեզուն եղբօր հետ ուսու-  
բէնն էր, իսկ ծնողներէ և երեխաներէ հետ—վրա-  
ցերէնը, մի բան, որը գծուեցնում էր ինձ: Ուզում  
էի, որ անունը, կրակոտ աչքերի համար, լինէր  
Յրաշեալ. բայց, ի մեծ ցաւ իմ, իմացայ, որ նրա  
անունը Քալի է: Գորում եղած ուսուցչութեանս ժա-  
մանակ, իմ լուացարարս, որ մի պառաւ վրացի կին  
էր, այդպէս էր կոչում: Տան մէջ այդ անունն աչ-  
խատում էին ամեն կերպ նուագական դարձնել.

Քալին դառնում էր մերթ Քալո, մերթ Քալինկա,  
մերթ Քալիա. բայց այդ միևնոյն էր—վիրական  
զգուելի հնչիւնն ամեն տեղ էլ պահպանում էր իւր  
զօրութիւնը:

Ի դէպ. երևելի էր և տանախրոջս բժիշկ տղայի  
անունը. քոյրը նրան կոչում էր Սաշա, մայրը—Ալէք-  
սանդր, հայրը—Սանդրո, մի պառաւ կին, որ երևի  
«մամիդա», կամ «դէդիդա», կամ «գիդիդէդա» կըլի-  
նէր և որը ամիսը մի քանի անգամ հիւր էր գալիս  
նրանց տուն, Ալէքսի էր անուանում, իսկ յաճախ  
նրան այցելող մի ֆրանս երիտասարդ էլ Ալեօշա  
էր կոչում:

Տղայի և աղջկայ գալուց յետոյ տանտէրս այլ  
ևս, հակառակ իւր սովորութեան, թէյի շէք հրա-  
ւիրում ինձ: Նա այժմ խօսակիցներ ունէր: Սակայն  
իւր բժիշկ որդու հետ նա աւելի շատ «նարդի» էր  
խաղում, քան թէ քաղաքականութիւնից ճառում:  
Փառք Աստուծոյ, բժիշկը դեռ ևս պարապ էր և  
այնքան ժամանակ ունէր, որ կարողանում էր օրա-  
կան տասներկու ժամ քնել և շորս ժամ էլ նար-  
դուն նուիրել: Նրա առանձնասենեակն իմ սենեակին  
կից սենեակն էր մէջ տեղը վակ դռնով, և կրքեմն  
հողիս հանում էր իւր սուրսափելի խումփոցով:

Քոյրը, ի հարկէ, նոյնպէս պարապ էր, այս-  
ինքն ուզում եմ ասել ամուսնացուի էր սպասում,  
բայց ամբողջ օրը տանը բանի էր—աւելում էր,  
մարբում էր, կարում էր, լուսնում էր, խոհանոցում  
շատ անգամ կերակուր էր եփում, պահում էր իւր  
մօր ծծկեր երեխային, և այդ բոլորը կատարում էր  
յարասե ծիծաղով ու ազմուշով: Իսկ երբ այդ գոր-

ծերից ազատ էր լինում, նրան տեսնում էի բակի կենտրոններից սրա կամ նրա տան դռանը եռանդով գրոյց անելիս կամ իւր բազմաթիւ ընկերուհիներէ հետ, որոնք գրեթէ ամեն օր այցելում էին նրան և, ինչպէս երևում էր, շատ էին սիրում: Հասկանում էի թէ նրա ինչն էր զբաղում ամենքին. զբաղում էր, ամենից առաջ, նրա մշտածիծաղ, վերին աստիճանի համակրելի դէմքը, նրա ուրախ բնավորութիւնը, բաց սիրտը, անհանգիստ շատախօսութիւնը, և մանաւանդ, պարզութիւնը, որ շատ անգամ ուղղակի երեսայական միամտութեան էր համեմատ: Երբ մի աղջիկ կամ կին սիրուած է իւր սեռի ներկայացուցիչներից, դա նշան է, որ նա տղամարդուն խելքահան կարող է անել:

Թէև դեռ ևս խելքահան չէի եղել տանտիրոջս աղջկայ վրայ, բայց և այնպէս առաջուց զգում էի, որ նա, առանց կամենալու, կարող է գծի նման սիրահարեցնել ինձ իւր վրայ: Որ ասեմ, թէ նա ինձ վրայ մի առանձին ուշադրութիւն էր դարձնում — ամենիւրեք. այնպէս, կրնայէր կանցնել: Բայց ես ոչ թէ միայն, ակամայ, առանձին ուշադրութիւն էի դարձնում նրա վրայ, այլև հետևում էի նրա ամեն մի քայլին այնպիսի յամառութեամբ, որ կարծես լրտես էին կարգել ինձ նրա վրայ.— գիտէի թէ սր ժամին, սր բոպէին նա որտեղ է, ինչ է շինում, ուր է գնում. դասերից յետոյ, որ առն էի գալիս, բակի դռնից դեռ ներս չմտած, ականջներս սրում էի, որ լսեմ նրա ձայնը: Մանաւանդ շատ սիրում էի լուսամտախո միջից գոգոնի կերպով նայել նրան, երբ նա, պատշգամբում կանգնած, սովորաբար եր-

կու ձեռքով կախ էր ընկնում պատշգամբի սիւներից միշտ կապուած լուացքի թոկից և յետ ու առաջ ճոճուելով, ծիծեռնակի պէս, ճուռուղում էր իրեն այցելած ընկերուհիների հետ, և երեկոյեան հովը շարժում էր նրա հարուստ սև մագերն ականջների մօտ և վզի վրայ: Մի բան, որ ատելով ատում էի նրա մէջ, այդ այն էր, որ նրա բերանից հայերէն ոչ մի բառ չէի լսում. ամեն անգամ, որ նրա բերանից վրացերէնի զգուելի հնչիւններն էի լսում, գլխիս ցաւը բռնում էր: Զգում էի, որ եթէ ասեմ նրան, կարող եմ ատել միմիայն նրա «Քալի» անուան և «Ժաղի-մոզիլի» համար:

III.

Մեր ծանօթութեանն սկիզբ գրուեց հետևեալ պարագաներում:

Մի երեկոյ տանտիրոջս ծառան մտաւ ինձ մօտ և այնպիսի ռուսերէնով, որպիսին միայն իմերէլ ծառան կարող է լսուել, ասաց, որ տանտէրս ինչպէս է իւր մօտ գնամ:

Գնացի:

Հիւրասենեակի դուռն ահագին ազմուկով բաց արեց Քալին, կամ Քալինկան, կամ Քալոն, կամ Քալիան (ճար շունիմ, այդ անուններից մէկնումէկով պիտի կոչեմ նրան):

— Ποκαγύτε, — ասաց նա մշտական ժպտալ թուիս դէմքին և, ներս թողնելով ինձ, խոխոյն ևեթ թաւս դէպի հարևան սենեակի դուռը: — Գնալա, մոզիլա (հայրիկ, եկաւ):

Ներս մտաւ ամառէրս իւր մշտական սև ատ-  
լասի արխարուզով և ահագին հատիկներ ունեցող  
«տէր-որորմեա» գցելով:

Նստեցինք:

Քալին նստեց հիւրասենեակի խորքում, աթո-  
ռի վրայ, և այնպիսի հետաքրքրութեամբ սկսեց  
նայել ինձ, որ կարծես առաջին անգամն էր տես-  
նում: Հայեացքն այնքան յամառ էր, որ չէի համար-  
ձակում նայել նրա կողմը, բայց լսիտ հանգիստ  
էի պահում ինձ և ուշադրութեամբ լսում էի, թէ  
ինչ է ասում ամառէրս:

Իմացայ, որ ամառէրս ուզում էր իւր բաղմա-  
թիւ որդիներից մէկը տէրտէր լինի և ինձ կանչել  
էր, որ այդ ապագայ տէրտէրին պարտատեմ «Վան-  
քի շկուր» մտցնելու: Չառ գործնական մարդ էր.—  
որդիներից մէկին «դոխտուր» էր շինել, միւսին ու-  
զում էր «ինչլիներ» շինել, երբորդին—տէրտէր, շոր-  
քորդին անպատճառ կը կամենար շինել փաստաբան,  
հինգերորդին—երկրաշափ, վեցերորդին ևս ինչ զի-  
տեմ ինչ, բայց ոչ մէկին—ուսուցիչ... Եւ շատ էլ  
լաւ կանէր:

«Ամենայն սիրով» յանձն առայ պարապելու  
տէրտէրացուի հետ: Քոյրը մօր ուղեկցութեամբ  
ներս բերեց երեխային ինձ ցոյց տալու: Գլուխը  
բաւական հաստ էր երևում: Բան շատցին, թէ որ-  
քան կըտան, ևս էլ ամառէրս այդ մասին խօսք բաց  
անեմ: Ուրախացած մտածում էի. «Եթէ այնպէս լի-  
նի, որ սենեակիս համար վարձ չառնեն և ամաս-  
կան մի քանի ուրբի էլ տան...»:

Հետեակ օրուանից սկսեցի պարապմունքը նոր

աշակերտիս հետ: Հաստագլուխ ևս ասում է,—խկը  
տէրտէրացու: Հայերէն որ ասես բան չէր իմանում.  
Ուսուցիչին համեմատաբար շատ վարժ էր, բայց և  
այնպէս նրան վաճակ էին զիմնազիօնի երբորդ-  
պարտատականից:

Չառ շուտով տեսայ, որ գլուխս քարովն էի  
տուել, յանձն առնելով ամառիորջս բթամիտ և վի-  
բախօս որդու հետ պարապելու տաժանակիր աշ-  
խատանքը: Բայց կարճ էի մերժել...

Հայերէն քիչ էր մնում այրուբներից սկսելի: Հո-  
գիս դուրս էր գալիս, և չէի կարողանում բառի  
վերջն ը արտասանել տալ. ասում էի՝ ասա ը, ասում  
էր. ասում էի՝ ասա «գիրքը բեր» ասում էր «գիրք  
բեր»: Երբեմն յանկարծ այնպէս կատաղում էի, որ  
ասում էի զիրքը ասմ հաստ գլուխը ճղեմ: Ուսում-  
նաբանումն էլ մի քանի այդպիսի վիրախօս աշա-  
կերտներ ունէի, բայց սրբանդ նրանք, սրբանդ սա:

Մի երեկոյ, երբ պարապում էի աշակերտիս  
հետ, մէկ էլ տեսնեմ սենեակիս դուռն ուժգնու-  
թեամբ բացուեց և զնդակի նման ներս բնկաւ Քալին:

—Нельзя-ли присутствовать на вашихъ  
занятияхъ?—կրակի նման նա թափեց իրար ետեկց  
բառերը:

Այնքան շփոթուեցի, որ իմացած ուսուցիչս  
էլ մոռացայ. քիչ մնաց МОЖНО-ի տեղ ЛЬЗЯ ասելի:  
Բարեբաղդաբար, չապստեց պատասխանիս և շարու-  
նակեց վրայ տալ դարձեալ ուսուցիչս.

—Ներազուրթին, ևս սաստիկ հետաքրքրում  
եմ, թէ ինչպէս է պարապում եղբայրս: Անչ՞շա շատ  
է ամանջում ձեզ, չէ:

Ես միայն ժպտացի: Չառ յիմար դրութ ինն էր. ուզում էի խօսեմ, պատասխան տամ, բայց ամաշում էի սխալ անեմ,—անտէր մնայ, ուռուերէն խօսելու մէջ շատ թոյլ էի: Իսկ նա այնպէս վարժ էր խօսում, որ ուռուերէնը կարծես իւր մայրենի լեզուն լինէր:

Աթոռ առաջարկեցի: Նստեց. նստեց այնպիսի փւթոտկութեամբ, որ, կարծես, աթոռը նախ, քան նստելը, գուրս պիտի քաշէին տակից:

Խնդրեց, որ դասը շարունակեմ: Չփոթմունքս դեռ ևս շարունակում էր. չփոթուած էի ոչ այնքան ուռուերէն վարժ խօսել շիմանալուցս, որքան նրա վերին աստիճանի պարզ, անբռնազրօսիկ վարուեցողութիւնից:

Դասը սրբազան պատմութիւնից էր. կէսը պատմել վերջացրել էի, որ նա ներս մտաւ, և այժմ, փոխանակ շարունակելու, չգիտեմ ինչնու, սկսեցի սկզբից: Բայց այդ սկիզբն սկսել էի շատ անօտար կերպով. բառերն արտասանելիս դանդաղում էի, լեզուս, կարծես, կապ էր ընկնում,—կարծես թէ այդ անպիտան աղջիկն եկել նստել էր դիմացս ոչ թէ նրա համար, որ տեսնի, թէ ինչպէս է սովորում եզբայրը, այլ նրան համար, որ տեսնի, թէ ինչպէս եմ պարագում ես, թէ ինչ գիտեմ ես: Բայց, հէրն անխժեմ, մէկ էլ մտածեցի, որ տասն իւր պէս ուռուերէն վարժ խօսող աղջիկ իմ գիտութեամբ, իմ դարգացմամբ կառնեմ ջերս կըկոխեմ, և յանկարծ սիրտ առայ. պատմութիւնս շարունակեցի նախ շատ հանգիստ կերպով, յետոյ այլ ևս ամենևին չէի չփոթուում, իսկ վերջը մինչև անգամ ոգևորուեցի: Դասա-

խօսութեանս ժամանակ առ երևոյթս եզբօր հետ էի, բայց միտքս իսկապէս քրոջ կողմն էր: Թէն չէի նայում նրան, բայց զգում էի, որ նա մոռացել է, թէ ինչի համար է եկել, և լսում է ինձ իբրև ջանասէր, հետաքրքրուող աշակերտուհի: Այդ յայտնագործութիւնը թէև շատ էլ անսպասելի չէր ինձ համար, բայց և այնպէս ես աւելի ոգևորուեցի դրամար, բայց և այնպէս ես աւելի ոգևորուեցի դրամար: Մեր գերերը փոխուել էին. նա ընկճուել էր ինձ (այսպէս էի կարծում), և անձնափոխահ էի ինձ (այսպէս էի կարծում), և անձնափոխահ էի ինձ (այսպէս էի կարծում), այնպիսի դարձել: Ոգևորութեանս մէջ, կարծես, այնպիսի մանրամասնութիւններ լինեցին, որ խեղճ տէրատէրացու աշակերտս, ի հարկէ, ոչինչ չէր կարող հասկանալ: Հոգսս էլ չէր. այդ բոլորն ոչ թէ նրա համար էի գոտախօսում, այլ քրոջ համար, որը իւր հրահ թափող յամառ հայեացքով, իւր ամբողջ էութեամբ կենդանի հետաքրքրութիւն էր դարձած: Դասախօսութեանս ժամանակ չկարողացայ դիմանալ և մի քանի անգամ նայեցի նրան: Գրո՞ղը տանի,— ի՞նչ հրաշալի, ի՞նչ պաշտելի աչքեր... Չարմանալի թերթերունքներ ունէր—այնքան երկար, խիտ ու սև, որ ճրագի լոյսի տակ ստուեր էին ձգում աչքերի վրայ և աչքերից ներքև:

—Ինչքան լաւ պատմեցիք,—երբխայական պարզութեամբ բացականչեց նա, երբ վերջացրի:— Գիտէք,—աւելացրեց իսկոյն,—ես հայերէն լաւ չգիտեմ, այսինքն գիտեմ, բայց տանու հայերէն գիտեմ, այսինքն, ուզում եմ ասել, զբարբար (ուզում էր ասել զբաղան լեզուով) խօսել չգիտեմ: Դրա համար ձեզ հետ ուռուերէն եմ խօսում: Բայց հաւա-

տացէր, ես բոլորը, բոլորը հասկացայ, ինչ որ պատմեցիր:

—Какая! что ты тамъ дѣлаешь?—հարեան օհնեակից լսուեց ըժշկի ձայնը:

—Ах!, ты уже встала?—բացականչեց բոլորը:—Смотрю, какъ учится Коля.

—Իսկ օպերա չենք գնում, — շարունակեց եզբայրը սուսերէն:

—Ի հարկէ, գնում ենք:

—Ուրեմն էլ ինչ բանի ես սպասում: Ուշացել ենք ավր:

—Ի՞նչ ես ասում: Ո՞ր ժամն է որ:

—Ութից պակաս է քառսուրբ:

—Մի թէ,—սարսափած ծուց ֆալին, վեր թռաւ տեղից, հայերէն (փառք Աստուծոյ) «բարի գիշեր» ասաց ու դուրս թռաւ:

Նոյն գիշերը ժամը 1-ին մօտ էր: Ամբողջ տան մէջ միայն ես էի դարթուն. գրադուած էի աշակերտական մօտ քառասուն տետրակ սրբագրելու ուսուցիչներին միայն յայտնի ձանձրալի աշխատանքով, երբ գանգակն ամեցին: Այդ տանտիրոջս սոգան ու աղջիկն էին վերադառնում օպերայից: Լուսամուտս վարագոյր չունէր. լամպիս լոյսը լուսաւորում էր ամբողջ սանդուղքը:

—Սաշա, ի՞նչ ջանասէր ուսուցիչ է: Տես, մինչև այժմ պարագում է:

Ես համոզուած եմ, որ նա այդ խօսքերն արտասանեց ամենեւին շմտածելով, որ ես կարող էի լսել: Համոզուած եմ նոյնպէս, որ եթէ ինքը համոզուած էլ լինէր, որ իւր խօսքերը պիտի լսեմ, — մի-

կնոյն է, էլի կարտասանէր, և այդ ոչ թէ նրա համար, որ խօսքն ինձ էր վերաբերում, այլ նրա համար, որ նա չէր կարող իւր սպաւորութիւնը թաղցնել: Այսպէս էր նրա բնատուրութիւնը:


IV.

Գիրակի երեկոյ էր: Ուզում էի դուրս գնամ մի քիչ գրօնեմ, մէկ էլ տեսնեմ բակից ինչ-որ ճիշեր լսուեցին: Այդ ճիշերը նախ խուլ էին, յետոյ յանկարծ այնպէս սաստկացան, որ կարծես մարդ էին մորթում: Դուրս թռայ պառչգամբը: Բակի մէջ աղմուկ էր ընկել, բոլոր կենդանիները դուրս էին թափուել իրենց բնակարաններից. տղամարդ չկար մէջները, բոլորը կանայք, աղջիկներ ու երեխաներ էին. ոմանք, չէի հասկանում ում սսցէին, անէծքներ էին ուղարկում, ոմանք ծիծաղում, հրհուում էին: Դիմացը, բակի մէջ զանուոյ սենեակներից ամենավերջինի լուսամտաի առաջ մի խումբ երեխաներ և կանայք իրար գլխի էին թափուել և ներս էին նայում: Այն ինչ ճիշերի ձայնը հետզհետէ սաստկանում էր: Այդ ճիշերի հետ միասին լսում էին և երեխաների ծուց ու ծղրտոցներ, — մի խօսքով՝ մարդու մազերը փշաքաղող ձայների մի տարօրինակ խառնուրդ: 2 համբերեցի, գոռացի.

—Ի՞նչ է պատահել:

Լուսամտաի առաջ մէկը արագութեամբ յետ նայեց և, տեսնելով ինձ, առաջ վազեց: Դա ֆալին էր:

—Ради Бога, помогите! — աղաղակեց նա, սարսափահար, աղերսալի աչքերով նայելով ինձ:



38 31-0

Ներքև վազեցի:

Քալին առաջս ընկաւ և ցոյց տուեց այն սե-  
նեակի դուռը, որտեղից լաւում էին ճիշերը, ծուոց-  
ներն ու ծղորտոցները:

Դուռն ուժգնութեամբ հրեցի, բաց չեղաւ-  
փակուած էր ներսից: Այն ժամանակ մկանուկներս  
իրենք իրենց լարուեցին մի կատաղի ուժով, և փոր-  
ձեցի դուռը կտարել: Մի բոպէից ինչոր ճայթեց,  
դուռը շրխկալով բացուեց և ոյժիս իներցիան ինքն  
իրեն ներս ձգեց ինձ սենեակը:

Աչքերիս առաջ պատկերացաւ հետեւեալ տե-  
սարանը: Յրդոտ երեսով մի տղամարդ մի կնոջ (ինչ-  
պէս յետոյ իմացայ, իւր կնոջ) մազերից բռնած՝ խե-  
լազարի կատաղութեամբ քարշ էր տալիս այս պա-  
տից այն պատը, այս անկիւնից այն անկիւնը: Կինը  
երկու ձեռքով պինդ բռնել էր իւր մազերից և քար-  
շում էր իւր կողմը, որպէսզի մարդու ձեռքերի  
թափը թուլացնի, բայց չէր աջողում, և ծալուող  
ծնկներով, սիրտ կտրատող ճիշեր արձակելով վա-  
զում էր, նայելով թէ գազանացած մարդը սր կողմն  
էր քարշ տալիս նրան մազերից բռնած: Երեք ման-  
րիկ երեխայ բարձրացել էին թախտը, գայլ տեսած  
ոչխարների նման դողալով կուշ էին եկել իւրար  
մօտ և ծուռ էին: Կինը շկարողացաւ դիմանալ օտի  
վրայ և երեսն ի վայր փռուեց գետնին: Մարդն  
այժմ թողեց նրա մազերը և սկսեց արացի տալ  
պատահած տեղը: Այդ գազանը գրեթէ ոչ մի ձայն  
չէր հանում, այլ միայն ծանր շնչում և կատաղած  
դոմէշի նման փռնշացնում էր, երևի յոգնելուց:

Արիւնն աչքերս առաւ: Առաջ վազեցի, ետևից

բռնեցի նրա սիւրտուկի օձիքից և ամենայն ուժով  
յետ հրեցի: Զեմ իմանում ինչպէս պատահեց, մէկ  
էլ տեսնեմ այդ ահագին մարդը երեսն ի վեր փռ-  
ւած է յատակի վրայ, իւր կնոջ կողքին: Այժմ ես  
սկսեցի արացել նրան: Պէտք է որ շատ մազալու  
տեսարան լինէր: Սկզբում նա, երևի յանկարծակիի  
եկած, չէր շարժուում տեղից, ոչ մի դիմադրութիւն  
ցոյց չէր տալիս, չէր աշխատում տեղից վեր կենալ,  
կարծես չէր էլ զգում արացիներիս հարուածները,  
որ, պէտք է ասած, բաւական անողորմաբար էի  
տալիս: Նա միայն, յատակի վրայ տարածուած,  
զարմանք արտայայտող աչքերով նայում էր ինձ,  
կարծես թէ հարցնում էր. «Ո՞վ ես, ի՞նչ ես ուզում»:  
Քայց յանկարծ, կարծես նոր ուշքի գալով, մի ուժ-  
գին շարժում գործեց և նստեց, սր վեր թուշի: Իս-  
կոյն վրայ ընկայ, նորից պառկեցրի յատակի վրայ,  
չողեցի կրծքին և բռնեցի կոկորդից: Երևի շատ էի  
պինդ հուպ տալիս, որ նա բերանը բաց էր արել,  
խրխուացնում էր, աչքերը չուել էր, արիւնով լցուած  
զգուելի սպիտակուցները դէմքիս յառած, և մար-  
մինն էլ մի տեսակ խլպլտում էր տակս:

Այժմ մութ կերպով յիշում եմ, որ սենեակը  
լիքն էր մարդկանցով. դրանք, երևի, բախում հաւա-  
քուած կանայք ու երեխաներն էին, որ առաջ չէին  
համարձակուում ներս մտնել և այժմ միանգամից  
ներս էին թափուել «Թամաշա» անելու: Չորս կողմս  
դժոխային դժվոց էր ընկել:

Կատաղութիւնից ուշքի եկայ այն ժամանակ,  
երբ մէկը վրայ ընկաւ, բռնեց երկու ձեռքիցս և բո-

լոր ուժով քաշելով վերկացրեց ինձ այդ թշուառա-  
կանի վրայից: Դա տանտէքս էր:

—Գժուխիլ իս, ինչ է, էդ լսօ խիղահեցիլը,—ա-  
սաց նա:

Բան չկարողացայ պատասխանել. սաստիկ յոգ-  
նեղ և դժուարութեամբ էի շունչ քաշում:

Այդ բոսկիլին հօր կողքին տեսայ Քալիլին լուռ,  
դժգոյն, սարսափահար ինձ նայելիս:

Տանտէքս բռնեց թևիցս և դուրս տարաւ:

Բայց հազիւ ոտս դուրս էի գրել դռնից, երբ  
յանկարծ ներսը հաւաքուած կանանց ու երեխանց  
մէջ մի սոսկալի ծղրտոց ընկաւ և գրեթէ նոյն վայր-  
կեանին մի ինչ-որ արարեց ծոծրակիս վրայ: Ա-  
կանջներիս մէջ ինչ-որ սուր ծուց լսեցի, կարծես  
թէ մօտս թնդանօթ արձակեցին, աչքերս նախ պէ-  
ծին-պէծին տուեց, յետոյ խկոյն միջնեց, գետինը  
թռաւ ոտներիս տակից և... այնուհետև թէ ինչ  
պատահեց—էլ չիմացայ:

Երբ ուշքի եկայ, տեսայ, որ պառկած եմ  
սենեակումս, մահճակալիս վրայ: Կողքիս, աթոռի  
վրայ նստած էր բժիշկը—տանտիրոջս աղան: Երա  
մօտ անհանգստութիւն արտայայտող դէմքերով  
կանգնած էին տանտէքս ու իւր կինը: Աչքերս բա-  
նալուս պէս մի թոյլ, ուրախական ճիշ լսեցի գլխիս  
վերեւը: Բժիշկը սաստող աչքերով արագութեամբ  
նայեց վերև, ասաց «ЧТО ТАК?» և նորից ինձ նայեց:  
Իսկապէս այդ ճիշն ինձ ուշքի բերեց: Աչքերս գցե-  
ցի գլխավերս, որ տեսնեմ, թէ ով էր, ոչոքի շտե-  
սայ: Յետոյ փոխէ-փոխ նայեցի բժշկի, նրա հօր,  
նրա մօր աչքերին և հարցրի.

—Ի՞նչ է պատահել:

—Ոչինչ, ոչինչ—արագութեամբ վրայ բերեց  
բժիշկը:—Խնդրում եմ, հանգիստ մնացէք:

Պեռ ես բան չհասկանալով, նայում էի նրա  
դէմքին, յետոյ ուզեցի վերկենամ:

—Պաժալըստա, պաժալըստա, մի վեր կենաք,  
—անհանգստութեամբ պահեց ինձ բժիշկը:—Հան-  
գիստ մնացէք, մի շարժուէք:

—Ի՞նչո՞ւ:

—Գլխիդ ցաւ չէ՞ր զգում, ծոծրակի վրայ:

Ծոծրակ որ ասեց, խկոյն ամեն բան յիշեցի  
և խիստ վախեցայ: Նոր զգացի, որ ծոծրակս սաս-  
տիկ ցաւում է: Յետոյ տեսայ, որ գլուխս պինդ  
փաթաթել էին, այնպէս պինդ, որ ճակատիս կա-  
շին չէի կարողանում շարժել: Էլի փորձեցի, որ  
վեր կենամ զրութիւն ստուգելու համար, բայց  
բժիշկը դարձեալ շթողեց և խնդրեց, որ ամենևին  
չխօսեմ, սիրտ տուեց՝ թէ բան չկայ, կարող եմ  
հանգիստ լինել:

—Չեղանից շատ արիւն է գնացել, դուք թոյլ  
էք, ձեզ անպայման հանգստութիւն է հարկաւոր,—  
ասաց նա:

Բայց ես խիստ հետաքրքրուած էի իմանամ, թէ  
նոյ իսկեց ինձ և ի՞նչպէս եղաւ, որ ուշաթափուեցի:  
Այդ մասին ինձ համառօտակի պատմեց տանտէքս:  
Երբ նա թևիցս բռնած՝ դուրս էր տանում ինձ այն  
գաղան մարդու սենեակից, վերջինս յանկարծ վեր  
էր թռել տեղից, յայտնի չէ որտեղից՝ մի ահագին  
փայտ էր առել, վազել էր ետևիցս և թըրխիլ—գլու-  
խս ճղել:

— 0՛, եթէ տեսնէիր, թէ ինչքան օտրսափելի էր նա այդ ըոպէին, Սաշա,—պլխավերես լսեցի Քալիի ձայնը:

Նոր իմացայ, որ աչքերս բացած ըոպէին նա էր ուրախական ճիշ արձակողը: Ուրեմն նա էլ էր ինձ մօտ... Բայց ես դարձեալ չէի տեսնում նրան:

Իսկ ուշաթափուել էի նրա համար, որ հարուածըն անշուշտ սաստիկ է եղել:

Այստեղ տանտիրոջս կինն ինչ-որ ասաց իւր անիծած վրացերէնով: Մարդը, ըստ երևոյթին, հաւանութիւն տուեց նրան և նորից ինձ դարձաւ:

—Վուր լանաս, մատաղ պիտիս անի: Ասինք, էն պիանիցն էլ հիշտ չի պրծնի,—աւելացրեց նա:

Ինչ վերաբերում է այդ «պիանիցին», նրան իսկոյննեթ ոտտիկանատուն են քարշ տուել:

Որպէսզի շողնեցնեն ինձ, բժիշկս հօրը, մօրն ու քրոջը պատուիրեց, որ դուրս գնան, ինքն էլ մի քառորդ ժամից հետեեց նրանց, նախապէս կրկին անգամ պատուիրելով ինձ, որ կարելոյն չափ չըշարժուեմ և աշխատեմ քնել:

Ծոծրակիս ցաւը հետզհետէ սաստկանում էր: Ցան երբեմն այնպէս շամփրում էր, որ ահագին ոյժ էի գործ դնում չզուարու: Պառկած էի շորերով. մինչև անգամ կօշիկներս ոտներիս էին: Ուզում էի վեր կենամ հանուելու, բայց, բժշկիս պատուէրը յիշելով, վախենում էի վեր կենամ: Յուսահատուում էի, որ ոչոք չկար մօտս, որին խնդրէի, որ գոնէ կօշիկներս հանէր: Բարեբաղբարար, մի քառորդ ժամից ներս մտաւ բժիշկս իբնեց իմերէլ ծառայի հետ և, գրեթէ առանց անկողնիցս վերկացնելու, ծառա-

յի օգնութեամբ, հանեց կօշիկներս էլ, շորերս էլ: Անհուն երախտագիտութեամբ սեղմեցի այդ բարի երիտասարդի ձեռքը:

Հինգ ըոպէից դարձեալ մենակ էի սենեակիս մէջ: Գրասեղանիս վրայ, ուղղակի աչքերիս դիմացը, վառում էր լամպը: Չգիտեմ ով էր վառել, միայն ինձ թւում էր, թէ պատրոյզն այնքան շատ էին բարձրացրել, որ սենեակս լցուել էր խեղդող ծխով. բացի դրանից, լամպի լոյսը տարօրինակ կերպով ծակում էր աչքերս մինչև անգամ այն ժամանակ, երբ աչքերս փակում էի:

Ծոծրակիս ցաւը տանջում էր անողորմարար երբեմն այդ ցաւը չգիտեմ նստում էր, թէ, ընդհակառակը, իւր ծայրահեղ սաստկութեամբ ըթացնում էր զգալուս ընդունակութիւնը, միայն այդ ըոպէնեքին համեմատարար հանգիստ էի զգում ինձ, և խելքիս ծայրը գնում էր քնելու համար: Բայց այդ միջոցներին յանկարծ կարճի խայթոցի նման դարձեալ այնպիսի սուր ծակոցներ էի զգում ծոծրակիս վրայ, որ ուզում էի գժի նման աղաղակեմ:

Չատ թունդ տենդ էր պատել ինձ, և այդ տենդի մէջ կամաց-կամաց ինքնամոռացութեան մէջ էի ընկել:

Գիշերուայ մի ժամին աչքս բաց արի և, կարծես երազի մէջ, տեսայ, որ կողքիս ով-որ նստած է, —ո՛վ էր, հաշիւ շտուի ինձ. այսքանս միայն տեսայ, որ կին էր,—ի՛նչ կին, չիմացայ, շաշխատեցի էլ իմանամ: Նա սպիտակ թաշկինակով փաթաթած գլուխը խոնարհեց դէմքիս վրայ:

—Ջուր,—չչնչացի:

Նա վեր կացաւ, անխելի քայլերով դէս-դէն ընկաւ սենեակին մէջ, յետոյ դուրս գնաց և մի քանի ըրպէից կրկին ներս մտաւ: Յիշում եմ, ուզում էի գլուխս բարձրացնեմ, չկարողացայ: Նա ձեռքը ներս կտրեց բարձիս տակը, բարձի հետ միասին բարձրացրեց գլուխս և միւս ձեռքով բաժակը մօտեցրեց շրթունքներին: Ծարաւից պապակում էի և ամենայն ախորժակով ծծեցի սառը ջուրը: Դրանից յետոյ գրեթէ խոկոյնեկթ չզիտեմ քնեցի, թէ նորից ինքնամոռացութեան մէջ ընկայ:

Առաւօտեան դարթնեցի շատ ուշ: Ծոծրակս դեռ ևս խիտ ցաւում էր: Ուզեցի վեր կենամ, բայց գլուխս յանկարծ այնպէս պտտեց, որ քիչ մնաց ուշաթափուէի: Սարսափահար նորից պառկեցի և այլ ևս չչարժուեցի:

Ներս մտաւ բժիշկս քրոջ հետ, յետոյ մտաւ տանտէրս, նրանից յետոյ տանտիրոջս կինը: Նրանց նայելով, խիտ զգացուեցի. արտասուք դուրս ցայտեց աչքերիցս: Ինձ թուաց թէ մեռնելու եմ, և այդ բարի մարդիկ կարեկցում են ինձ: Բժիշկս նայեց դարկերակս, շափեց տաքութեանս աստիճանը, ասաց, որ ճգնաժամն անցել է, որ չվախենամ, անպատճառ լաւ կըլինեմ: Խրախուսական խօսքեր ասեցին և տանտէրս ու նրա կինը: Բայց մի բան, որ երբէք չեմ մոռանալ, այդ Քալիի հայեացքն էր... Ինչպիսի՜ երեխայական անմեղ կարեկցութեամբ նայում էր նա ինձ իւր ահագին թերթերունքներով պատած սև աչքերով... Կուզէի այդ ըրպէին համբուրել նրա ձեռքերը և լաց լինել այդ ըրպէին ինձ համակած մի անսովոր, մի վերին աստիճանի քրն-

քոյշ, քաղցր զգացումից: Արդեօք նա չէր (յանկարծ միտս եկաւ այդ ըրպէին) գիշերը մէն-մենակ մահճակալիս մօտ ինձ հսկողը, ինձ ջուր տուողը...

V.

Երբ բժիշկը, տանտէրս, սրա կինն ու աղջիկը դուրս գնացին սենեակիցս, հազիւ մի քանի ըրպէ էր անցել, մէկ էլ տեսնեմ դուռը զգուշութեամբ բացուեց և ներս մտաւ մի կին:

Նա կըլինէր մօտ երեսուն տարեկան. հասակը խիտ բարձր էր, իսկ մարմինն—այնքան նիհար, որ հասարակ չթի հագուստը, կարծես, կախ էր ընկած չորացած ուսերից: Նիհարութիւնից նրա գէմքի և ձեռքերի վրայ միս չէր նացել, իսկ աչքերը տարօրինակ կերպով մեծ էին երևում: Մի տեսակ քարացած սարսափի արտայայտութիւն ունէր նրա դէմքը, հայեացքը վախոտ էր, որսի շներից հալածուած նապաստակի հայեացքի պէս: Կուրծք ասուած բանը նա չունէր. դրա տեղ դարգացել էր նրա մէջքը, չոր ու կմաղքացած, այնպէս որ առաջին հայեացքից ստպատ ունեցողի տպաւորութիւն էր թողնում: Նրա ամբողջ արտաքինի մէջ սիրտ ճմրդ մի տրագիկական զիծ կար, որը խոկոյն եկթ գրաւում էր նայողի ուշադրութիւնը:

Ներս մտնելով, նա մի ըրպէ կանգնած մնաց դրան մօտ և, ըստ երևոյթին, այնքան շփոթուեց, որ ինձ թուաց, թէ ուրիշ տեղ է ուղեցել մտնել, բայց սխալմամբ մտել է իմ սենեակը: Բայց սրբան եղաւ դարմանքս, երբ այնուհետև նա կամաց մօտե-

ցաւ մահճակալիս և, իւր քարացած ահագին աչքերով նայելով ինձ, հարցրեց մաքուր հայերէն.

— Ի՞նչպէս էք:

— Լաւ եմ, — արտասանեցի մեքենայաբար, զարմացած ինքս ինձ հարց տալով, թէ սով է:

— Փառք Աստուծոյ, — կամաց հառաչեց նա և, կարճ լուսթիւնից յետոյ, ասաց. — գիշերը խիստ տենդ ունէիք:

Ապշեցի:

— Դուք ի՞նչ գիտէք:

— 2 է որ ես ձեզ մօտ էի:

— Ա՛խ, դճուք էիք ինձ ջուր տուողը:

— Ես էի. Ձեր սենեակում ջուր շփտայ, մեր տանից բերեցի:

Գեռ ևս ապշած՝ նայում էի նրա ոսկրացած դէմքին:

— Ներողութիւն, ես պատիւ չունիմ ձեզ ճանաչելու, դուք սով էք:

Սկզբում նա, ըստ երևոյթին, զարմացաւ, որ իրեն չեմ ճանաչում:

— Մի՞թէ ինձ երբէք չէք տեսել այս բակում... Ասե՛ք, ճիշտ է, տեսած չէք լինիլ, որովհետև ես մեծ մասամբ հիւանդ եմ և... ամաշում էլ եմ դուրս գալ անից... Բայց խօ երեկ տեսա՛ք:

Մատս կծեցի:

— Դուք այն... գազանի կի՛նն էք:

— Այո, — աչքերը վայր թողնելով շնջաց նա, և նրա նիհար այտերը ծածկուեցին դժգոյն շառագունով:

Խնդրեցի որ նստիւ նստեց:

Ըստ երևոյթին, ուզում էր խօսել, բայց ամաշում էր, նրա շփոթմունքը տեսնելով, ինքս էլ քաշում էի հարց ու փորձ անեմ:

Սակայն կարճ լուսթիւնից յետոյ, աչքերը վայր թողած, հագիւ լսելի ձայնով ասաց.

— Ինչո՞ւ միջամտեցիք, ինչո՞ւ ձեր կեանքը վտանգի մատնեցիք:

— Նա ախր ձեզ սպանում էր:

Յանկարծ նա նայեց ինձ, նրա հանգած աչքերը վառուեցին տարօրինակ փայլով:

— Թո՛ղ սպանէք, թո՛ղ սպանէք, թո՛ղ սպանէք,

— սրտանց վրայ բերեց նա: — Աւելի լաւ չէր լինիլ, մի անգամից կը պրծնէի... ինձ սպանելը երջանկութիւն կըլինէր ինձ համար, լսկ ձեզ... Լսեցէք, պարոն, — յանկարծ աւելացրեց նա դողդոջիւն ձայնով. — բժիշկն ի՞նչ ասաց վէրքը խօ վտանգաւոր չէ:

— 2 է:

— Փառք Աստուծոյ, — դարձեալ հառաչեց նա: — Ա՛խ, որ մտածում եմ, որ իմ պատճառով էք այդ դրութեան մէջ ընկել... Գիշերն այնպէ՛ս աղօթում էի, որ լաւանաք... Չնայելով, որ ինքս հիւանդ էի, — ամբողջ մարմինս մխկտում էր ցաւից, — բայց և այնպէս, երբոր իմացայ, թէ այն անաստուածն ինչ օրի է գցել ձեզ, մոռացայ իմ հիւանդութիւնս և եկայ, որ մտիկ անեմ ձեզ: 2 է որ դուք մենակ էք, նայող չունիք:

— Ուրեմն քվիթ, — նկատեցի կատակով, նրան խրախուսելու համար:

Նա նեղացաւ:

—Միթէ դուք կարծում էք, որ ես քվիթ լինելու համար...

Թոյլ չտուի, որ վերջացնի, ասացի, որ կատակ արի, ներողութիւն խնդրեցի, շնորհակալութիւն յայտնեցի իւր բարեսրտութեան համար և հարցրի, թէ իւր ամուսնուն դեռ չեն թողել:

—Ոչ,—կցկտուր կերպով պատասխանեց նա և լռեց: Յետոյ, կարծես ինքն իրեն, ասաց.—նրան բռնեցին տարան, բայց ինչ օգուտ: Ժամէ ժամ սպասում եմ, որ նրան կըթողնեն, և ես դարձեալ...

Նա չվերջացրեց իւր ասելիքը և իւր վիճակի հետ վարուց հաշտուած մարդու հանդիսա յուսահատութեամբ գլուխը խոնարհեց հարթ կրծքի վրայ:

Միբառ ճմուռեց, երբ նրան այդ գրութեան մէջ տեսայ: Ժողովարանի ցաւը մոռացել էի, և ինձ խիտ հետաքրքրում էր այդ դժբաղդ կնոջ վիճակը:

—Ներեցէք, տիկին, ես խիտ հետաքրքրւում եմ... Ինչո՞ւ է նա ձեզ... Ինչո՞ւ է նա ձեզ հետ այդպէս վարւում:

—Այդպէս է վարւում,—կարճ պատասխանեց նա:

—Մի առիթ, մի պատճառ պիտի լինի թէ ոչ: Նա կարծես թէ զարմացաւ, որ ես առիթ, պատճառ էի հարցնում:

—Առիթը, պատճառն այն է, որ նա խմում է, —չատ հասարակ կերպով պատասխանեց նա:

—Իսկ նա շուտ-շուտ է խմում:

—Ամեն օր հարբած է:

—Եւ ամեն օր էլ... այդպէս է վարւում:

—Ամեն օր:

—Հապա ինչպէս է, որ, բացի երեկոսանից, ձեր ձայնը երբէք չեմ լսել այս բակում:

—Որովհետեւ միշտ չեմ աղաղակում, ամօթից ձայնս փորս եմ գցում, որ ոչոք չլսի: Բացի դրանից, նա սովորաբար այնքան խմած է լինում, որ էլ ոյժ չի ունենում, և ես կարողանում եմ դիմադրել նրան: Բայց երեկ շատ չէր խմած, փող չունէր, և ջիզբը ինձ վրայ հանեց: Ա՛խ, պարոն, նա շատ է ծեծում ինձ, շատ,—աւելացրեց նա, և նրա աչքերը ցուցեցին արտասուքով:—Գլուխը քարը, թող ինչքան և ինչպէս ուղում է ծեծի, միայն թէ մազերիցս չքաշի... Մազերիցս որ բռնում ու ձիգ է սալիս, խելքիս ծայրը թռչում է... Նա մի հաստ փայտ ունի, երբոր ձեռներն ու ոտները յոգնում են, այն փայտովն է սկսում ծեծել: Այդ փայտովն էր, որ երեկ երեկոսեան խփել ' ձեզ: Այնքան վախեցնում եմ նրանից, որ չէի համարձակւում այդ փայտը կտրցնել: Բայց երեկուայ դէպքից յետոյ, այդ փայտն էլ նրա հետ տարել են ոստիկանատուն:

Ապշած նայում էի յարատե ծեծ ուտելուց կմաղբացած այդ մարտիրոս կնոջ երեսին: Այդ սոսկալի բաները նա պատմում էր համեմատաբար այնպիսի հանգստութեամբ, որ կարծես թէ մի սովորական, մի աննշան բան լինէր պատմելիս: Չկարողացայ զսպել ինձ և բացականչեցի.

—Լաւ, երբոր այդպէս է, էլ ինչպէս էք կարողանում ապրել նրա հետ:

Նա զարմացած նայեց ինձ:

—Հապա ինչ անեմ:

—Բաժանուկեցէք:

—Յաժանուեմ...հո,—աղաղակեց նա սկզբում վերին աստիճանի դարմացած, յետոյ վերկացաւ և ամենայն եռանդով շեշտեց.—Երբէք:

—Ինչո՞ւ: Երևի սիրում էք նրան:

—Սիրո՞ւմ...

Եւ նա ծիծաղեց: Եթէ այդ բոլորին նրա դէմքին նայելիս չլինէի, կըկարծէի, թէ լաց է լինում, այնքան տարօրինակ էր նրա ծիծաղի ձայնը:

Նա յանկարծ դադարեց ծիծաղելուց, նորից նստեց և այս անգամ վրայ տուեց տենդային արագութեամբ.

—Լսեցէք, պարոն... ես ձեզ իմ եղբայրն եմ համարում, թէ չէ երբէք այս բաները չէի պատմել... Եւ ոչոքի չեմ պատմել, ոչոքի չեմ գանգատուել... Եւ կարեկցո՞ղն ով է... Բայց ես այդ չէի ուզում ասել: Դուք ասում էք բաժանուեմ, ես մի անգամ այդպէս էլ ուզում էի անեմ, բայց ինձ ասացին, որ եթէ բաժանուեմ, երեխաներս ինձ չեն տալ, այլ կըթողնեն իրենց հօր մօտ: Օրէնքն այդպէս է, ասում են: Իսկ ես կարո՞ղ եմ, առանց իմ երեխաներիս, գէթ մի օր, մի ժամ ապրել: Ո՞ւմ համար եմ ապրում ես, ո՞ւմ համար կարող եմ ապրել: Երեխաներիս համար չէ, որ ապրում եմ և տանում այս տանջանքները: Հաւատացնում եմ ձեզ, պարոն, որ եթէ երեխաներս չլինէին, մինչև այժմ ես վաղուց Քուռն էի ընկել խեղդուել... Իսկ երբ որ իմ երեխաներս ինձ մօտ չեն լինելու, շատ հարկաւոր է ինձ հանգիստ կեանքը. Ոչ, հարկաւոր չէ, չեմ ուզում: Թո՞ղ ծեծի, թող ինչքան և ինչպէս ուզում է տանջի,—սպանելուց աւելի վատ բան լսօ չի կարող ա-

նել, Իսկ ես իմ երեխաներից չեմ բաժանուել, երբէք, ո՞չ մի պայմանով:

Օ՞, մայր, օ՞ մայրական զգացում... Միակ զգացումը, որի առաջ ամենայն երկկողածութեամբ պէտք է խոնարհուել: Այն ո՞ր մարտիրոսն է, որ կը համարձակի իւր հեզութեամբ, իւր խոնարհութեամբ, իւր ասնջանքներով պարծենալ աւելի, քան մայրը...

Լուեցի, էլ բան չկարողացայ ասեմ: Խղճում, կարեկցում էի վերին աստիճանի, բայց և ահնածում էի:

«Պիանիցին» թողեցին երեք օրից յետոյ: Մինչև այդ ժամանակ նրա կինն ամեն օր մտնում էր ինձ մօտ, հարցնում էր առողջութիւնս, հաւաքում էր սենեակս, ճաշերին կերակուր էր բերում (տանտէրս էլ էր ուղարկում), բայց էլ չէր խօսում, հարցերիս խուսափողական պատասխաններ էր տալիս, կարծես զղջում էր, արդէն շատ բան էր պատմել: Նա խոյս էր ապրիս տանտիրոջս ընտանիքի այս կամ այն անդամի հետ ինձ մօտ հանդիպելուց և դռնից յետ էր դառնում, երբ նրանց տեսնում էր ինձ մօտ: Երբ մի անգամ հարցրի նրան, թէ ինչու է խուսափում տանտէրերից, ասաց որ ամաշում է և կըվիրաւորուել, եթէ նրանք սկսեն հարձուփորձ անել իրեն: Տեսայ, որ որքան դժբաղդ էր, այնքան և իւր ընտանիքի պատուին նախանձախնդիր հպարտ կլին:

Ամուսնու երևալու օրից նա չքացաւ:

Այդ օրուանից ահանջս միշտ ձայնի էր, բայց նրանց ընտանիքի այլ ևս աղմուկի ձայն չէր գալիս: Ինչպէս երևում էր, տուածս դասն ապարդիւն չէր անցել, կամ գուցէ, մտածում էի, ամեն բան շա-

բունակում է առաջուայ պէս, և խեղճ կինը «ձայնը փորն է գցում», ինչպէս ինքն էր ասում: Տանտէրս ուզում էր դուրս անել նրանց իւր տանից, բայց աղջիկն իմ ներկայութեամբ խնդրեց նրան, որ այդպիսի բան չանի, առարկելով, որ այն «պիանիցը» ուրիշ տեղ ուղղակի կըսպանի իւր կնոջը, իսկ իրենց տան մէջ այլ ևս չի համարձակիլ մինչև անգամ ծեծել: Եւ Քալին իւր հրաշալի աչքերով նայեց ինձ այդ ասելիս: Գրոզը տանի, այդ աչքերը չէին միթէ պատճառը, որ կեանքս վտանգի մատնեցի: Այժմ էլ, որ յիշում եմ նրա արտասուախառն, սարսափահար հայեացքը, որով նա բակից աղերսում էր ինձ, որ օգնութեան հասնեմ, այժմ էլ երբեմն դարձնում է իմ մէջ այն խիզախ ոգին, որով այն ժամանակ մի ակնթարթում համակուած ներքև վաղեցի և կոտորեցի «պիանիցի» դուռը: Եւ միայն միջ կանէի այն ժամանակ այդ աչքերի համար...

VI.

Ծոծրակիս վէրքն այնքան էլ վտանգաւոր չէր, որքան կարծում էի և որքան կասկածում էի բարեկամներիս ինձ ցոյց տուած հոգացողութիւնից: Երկու շաբաթից յետոյ արդէն սղջ ու առողջ շարունակում էի ուսումնարան գնալ: Վերսկսել էի և դասերս տէրտէրացու աշակերտիս հետ:

Այժմ այնպիսի մի մտերմական յարաբերութիւն էր սկսուել իմ և տանտիրոջս ընտանիքի միջև, որ այլևս մտքովս անգամ չէի անցկացնում ուրիշ աւելի խաղաղ տեղ սենեակ վարձեմ: Այժմ երեխանց դժո-

խային աղմուկը, նրանց ճիշ ու ծուցը, նրանց վաղվոցը պատշգամբի վրայ մինչև անգամ սիրելի էր ինձ համար, իբրև իմ հայրենի տան դաւակնների աղմուկ: Չառ անգամ այդ շարաճճիներն անաղին աղմուկով ներս էին թափւում սենեակս, խառնում խառնշտորում էին թղթերս ու գրքերս և, երբ տեսնում էին, որ սկսում եմ բարկանալ, նոյն աղմուկով դուրս էին թափւում և նորից սկսում իրենց ճիշ ու ծղրտոցը պատշգամբի վրայ:

Ազատ մուտք ունէր ինձ մօտ և Քալին: Նկատել էի, որ սկզբներում, երբ դեռես այնքան էլ մօտ չէի ինք իրար, սենեակս էր մտնում միշտ այն ժամանակ, երբ իւր անթիւ եղբայրներից ու քոյրերից մէկն ու մէկն ինձ մօտ էր լինում: Նա դուռը բաց էր անում իրեն քառուկ աղմուկով, գլուխը ներս էր կոխում և «Գոլ... (կամ Մաշո), շէն մքա խար» (դու այստեղ ես) էր ասում վրացերէն, այնուհետև միայն ներս էր մտնում, դուռը միշտ շրխկացնելով իւր ետեից, և մոռանալով, որ Գոլեայի կամ Մաշոյի համար է եկել, նստում էր ու...

Ինչ հիանալի, ինչքան քաղցր բան է, երբ հաւանածդ աղջիկը նստած է քեզ մօտ, և դու զրոյց ես անում նրա հետ:

— Օրիորդ, ինչո՞ւ դուք վրացերէն էք խօսում ձեր եղբայրների և քոյրերի հետ, — նկատեցի նրան մի անգամ, երբ նա «Գոլեա, շէն մքա խար» նախարանով ներս մտաւ սենեակս:

— Ի՞նչ անեմ, որ ամաչում եմ հայերէն խօսել ձեզ մօտ, — ասաց նա ուսերէն, իւր հիանալի անմեղ ժպիտը դէմքին:

—Գուր ակր տանն էլ չէք խօսում հայերէն-  
երբէք ձեր բերանից հայերէն լսած չկամ, բայց մի  
«բարի գիշեր»-ից:

—Ի՞նչ անեմ, որ սովոր չեմ:

—Բայց դուք հասկանում էք, որ այդ լաւ չէ:

—Լաւ չէ: Ինչո՞ւ:

Փոխանակ պատասխանելու, հարցրի.

—Գուր երբ և իցէ տեսել էք մի վրացի, որ  
իրենց տանը հայերէն խօսի:

—Չէ: Ի՞նչպէս կարելի է:

—Ինչո՞ւ չի կարելի:

—Վրացին հայերէն,—դարձացաւ նա:

—Հն, ինչ կայ որ:

—Ի՞նչպէս կարելի է,—կրկնեց նա և այս ան-  
գամ բարձրաձայն ծիծաղեց:—Վրացին մի՞թէ հայե-  
րէն կըխօսի:

—Ես էլ հէնց այդ եմ ուզում իմանալ, օրինորդ:  
Թէ ինչո՞ւ վրացին հայերէն չի խօսիլ:

—Որովհետեւ... (նա դարձեալ ծիծաղեց)  
լսուած բան է, որ վրացին հայերէն խօսի:

Ես արդէն գրգռուում էի: Նա նկատեց այդ և  
աւելացրեց լրջութեամբ.

—Դա խիստ տարօրինակ բան կըլինէր:

—Ամենեկին էլ տարօրինակ բան չէր լինիլ:  
Ինչուր, թէ դուք վրացի էք և, փոխանակ «Կոլեա,  
չէն սքա խար» ասելու, ասում էք՝ «Նիկողայոս, դու  
սխտեղ ես»,—ինչ կայ այդտեղ տարօրինակ:

—Ի՞նչպէս թէ ինչ կայ:

—Հն, ինչ կայ:

—Այն կայ, որ... վրացին ինչո՞ւ պիտի խօսի

հայերէն, քանի որ գիտէ իւր մայրենի լեզուն: Ոչ  
մի վրացի չկայ, որ իւր մայրենի լեզուն չգիտենայ:

—Ի՞նչ ծիծաղելի մարդ էք... շարունակ հար-  
ցեր էք տալիս: Չկայ, որովհետեւ չկայ:

—Ոչ, օրինորդ, չկայ, որովհետեւ վրացին ամեն  
տեղ և ամեն ժամանակ ամենից առաջ վրացի է և  
ազգային մեծ հպարտութիւն ունի: Փորձեցէք վրա-  
ցուն իւր ազգութիւնը հայոցի, նա խսկոյն խան-  
ջալ կըհանի ձեզ վրայ, բայց հայի ինչ սրբութիւնն  
ուզում էք հայոցեցէք, նա զիջողաբար, շատ անգամ  
փախկոտութեամբ կըժպտայ ձեր երեսին ու կանցնի:  
Ահա թէ ինչո՞ւ վրացին հայերէն չի խօսիլ, իսկ  
հայը կարող է հայերէն չխօսել էլ—դա տարօրինակ  
չի լինիլ, որովհետեւ ձեռ պէս օրինակներ շատ...  
Չունը որ շուն է, նա էլ յատուի պէս չի մլաւում,  
և կատուն շան պէս չի հաջում... Որովհետեւ, շատ  
ճիշտ էք ասում, դա խիստ տարօրինակ բան կը  
լինէր:

Այս նիւթի մասին խօսեցի բաւական երկար  
և անդադար յանդիմանելով նրան: Բայց ինձ թւում  
էր, թէ յանդիմանութիւնս բաւական խիստ էր,—  
թէ և աշխատում էի խօսքերիս բարեկամական մեղմ  
կշտամբանքի արտայայտութիւն տալ.— ուստի կար-  
ծում էի, թէ Քալին կամաչի, կըշփոթուի, բայց,  
ընդհակառակը, ամօթի, շփոթմունքի ոչ մի նշոյլ  
չտեսայ նրա դէմքի վրայ. նա նստած էր հանգիստ  
և իւր մեծ-մեծ աչքերը վերին աստիճանի ուշա-  
դրութեամբ յառել էր դէմքիս, կարծես թէ յանդի-  
մանութեանս առարկան ինքը չէր, այլ մի ուրիշը,

որին ինքն էլ պատրաստ էր միևնոյն յանդիմանութիւնը կարգալու ինձ հետ միասին:

Երբ ես լռեցի, նա էլ մի բոպէի չափ լուսմնաց և տարօրինակ յամառութեամբ շարունակում էր նայել աչքերիս: Այսպէս նայում են խելացի երեխաներն այն դէպքերում, երբ նրանց հարցատէր ուղեղի մէջ մտածողութեան մի նոր հորիզոն ես բաց անում:

— Գիտէք, այդ մասին ես երբէք չեմ մտածել, — վերջապէս ասաց նա երեխայական պարզութեամբ և, կարծես, ինքն իրեն զարմանալով, թէ ինչո՞ւ չէր մտածել: — Եթէ գիտենամ, որ դուք չէք ծիծաղիլ ինձ վրայ, — աւելացրեց նա լրջութեամբ, — ձեզ հետ միշտ հայերէն կը խօսեմ:

Ակամայ ծիծաղեցի:

Ըստ երևոյթին, նա առնուեց:

— Տեսնո՞ւմ էք, — ասաց, — դեռ հայերէս չըլտած, արդէն ծիծաղում էք:

— Ես ծիծաղում եմ ոչ թէ ինձ անծանօթ ձեր հայերէն խօսելու վրայ, — բացականչեցի ես, — այլ նրա համար, որ դուք վախենում էք, թէ կը ծիծաղեմ: Ինչո՞ւ պիտի ծիծաղեմ: Սխալ կանէք, կուղղեմ:

— Կուղղէք, — ուրախացաւ նա:

— Ամենամեծ հաճութեամբ:

Նա յանկարծ վերին աստիճանի կենդանութիւն ստացաւ, և շարահանի ժպիտը նորից փայլեց նրա դէմքի վրայ, աչքերի մէջ:

— Երբոր այդպէս է, — բացականչեց նա, — ես այսօրուանից, հէնց իսկոյն սկսում եմ ձեզ հետ

հայերէն խօսել. տանն էլ, ամենքի հետ հայերէն կը խօսեմ, ամենքի հետ: Այժմ իսկի էլ հոգս չէ, ուղում էք՝ ծիծաղեցէք, ուղում էք՝ չէ, ես հայերէն պիտի խօսեմ, անպատճառ պիտի խօսեմ, այ, կը տեսնէք, թէ չեմ խօսիլ... Բայց գիտէք, — զարմանալի արագութեամբ զօպելով իրեն, ասաց նա մտահոգութեամբ. — ես հայերէն կարգալ էլ չգիտեմ ասի:

— Ի՞նչ էք ասում:

— Այսինքն, գիտեմ, բայց... Ահա, տեսէք, ինչպէս եմ կարգում:

Եղբօր ձեռքից արագութեամբ առաւ հայոց լեզուի դասագիրքը, բաց արեց առաջին պատահած հատուածը և, մատը երեխայի նման տողերի վրայ շարժելով, սկսեց կարդալ. կարգում էր երկբօրդ պատրաստական դասատա՝ աշակերտի պէս, արտասանութիւնը ռուսերէն էր. Թ չկար, չկար ու չկար: Հազիւ մի տասը տող կարդացած՝ բաց գիրքը դրեց ծնկների վրայ և գրեթէ յուսահատութեամբ նայեց ինձ:

— Տեսո՞ք ինչպէս վատ եմ կարգում:

Եղբայրը, որ նրա կարգալու միջոցին, ինձնից քաշուելով, հազիւ էր զօպում ծիծաղը, այժմ յանկարծ փռակացրեց:

Քոյրը բարկութեամբ գրքով լսփեց նրա գլխին:

— Ի՞նչ ես ծիծաղում, — աղաղակեց վրացերէն:

— Օրիորդ, դարձեա՞լ վրացերէն. չէ՞ որ...

— Ի՞նչ անեմ, ինչո՞ւ է ծիծաղում: Ինձնից լաւ է կարգում:

—Ի հարկէ, լաւ եմ կարգում,—Չգրացրեց նրան եղբայրը:

—Լուիւր, դղուելի, անպիտան: Ես գիտեմ, որ դու դասդ երբէք չես իմանում: Եթէ կարգին սովորէիր, գիմնադիոնից դուրս չէին անիլ:

Եղբայրն, իմ լուսթիւնից սիրտ առած, ուզում էր հակաճանել, բայց քոյրը լռեցրեց նրան:

—Լուիւր, լուիւր. գեռ ևս ուզում ես խօսել,— բարկացած վրայ առեց նա:—Դու միշտ բթամիտ ես շեղել և միշտ էլ բթամիտ կըմնաս:

—Բայց և այնպէս, հայերէն ես քեզանից շատ լաւ եմ կարգում,—դարձեալ Չգրացրեց եղբայրը:

Քալին գայրացած դիմեց ինձ.

—Սա ի՞նչ յանդգնութիւն է: Ինչո՞ւ չէք ասում, որ լուի: Մի՞թէ, յիբաւի, այս գղուելին ինձնից լաւ է կարգում:

—Դուք երկուսդ էլ վատ էք կարգում,—ծիծաղեցի ևս:—Չեր կարգացածը հայերէն չէ, այլ Աստուած գիտէ, թէ ինչերէն: Ես զարմանում եմ, ինչո՞ւ չէք կարողանում թ արտասանել բառի վերջը, մի՞թէ դա այդքան դժուար է:

—Ը ոչ վրացերէնում կայ, ոչ ուսերէնում, — նկատեց քոյրը:

—Լաւ, ի՞նչ անենք որ չկայ, բայց արտասանել խօ կարելի է: Գիտէք ինչ կայ, օրիորդ,—յանկարծ նկատեցի ևս,—բոլոր մեղը ձեր մօրն է:

—Համաձայն եմ. նա հայերէն չի իմանում. եթէ իմանար, մենք զուրս էլ տանը հայերէն կըլինէինք խօսելիս:

—Իսկ հայերէն գրել գիտէք, օրիորդ:

—Չգիտէ, պարոն, չգիտէ, Աստուած է վկայ, չգիտէ,—դուրս պրծաւ եղբայրը:

Քոյրը ձեռքին բռնած գրքով դարձեալ մի պինդ հասցրեց նրա հաստ գլխին:

—Քեզ են հարցնում, ի՞նչ ես ամեն անգամ դուրս պրծնում,—հանգստութեամբ նկատեց նա և ապա դարձաւ ինձ.—Սուտ է ասում, ես գրել էլ գիտեմ: Ուզո՞ւմ էք գրեմ:

Մատիտն ու թուղթն առաջ քաշեցի:

—Ի՞նչ էք ուզում գրեմ:

—Գրեցէք «յամառ»:

—Ամսր:

—«Յա-մառ»:

—Ի՞նչ է նշանակում «յամար»:

—«Յամար» չէ, օրիորդ, «յամառ», վերջը կոշտ ու է, և ոչ թէ փափակի ր: Դա էլ ձեր Յ-ի օրին է:

—«Յամար»,—կրկնեց նա և իսկոյն իւր սխալը նկատելով մտառութեամբ ուզեց ուղղել.—յա... Ի՞նչպէս ասացիք:

—«Յամառոռո»,—կրկնեցի ևս մի ու-ի տեղ մի քանիսը շարելով իրար ետեից:

—«Յամառոռո»,—ձգեց նա:—Ի՞նչ է նշանակում «յամառ»:

—Упрямый,—թարգմանեցի ուսերէն:

—Իրատածի,—բացահանչեց նա:

—Հնա, ձեր հայրն այդպէս է ասում: «Յամառ» Թիֆլիսի բարբառով նշանակում է «իրատածի»:

—Երեւակայեցէք, որ ես «յամառ» բառը երբէք լսած չկամ: Պէտք է որ շատ դժուար լեզու լինի

ձեր այդ... ներողութիւն, մեր գրաբարը (գրաբար ասելով նա դարձեալ մեր գրական լեզուն էր հասկանում):

— Ընդհակառակը, օրիորդ, եթէ աշխատէք սովորել, կըտեսնէք, որ շատ էլ դժուար չէ:

— Ընչո՞ւ էք ասում:

— Հաւատացնում եմ:

— Երբ որ այդպէս է, կըսովորեցնէք ինձ, հո՞ւ, կըսովորեցնէք:

— Ամենայն ուրախութեամբ:

Ուրախութիւնից նա մինչև անգամ ծափ տուեց:

— Ա՛խ, ինչքան լաւ կըլինի,—բացականչեց երեխայի նման:— Ի՞նչ էք կարծում, սրբան ժամանակում կըսովորեմ:

— Այդ ձեզանից է կախուած. եթէ աշխատէք, շատ շուտ կըսովորէք:

— Մի ամիս բաւական է... երկու ամիս... երեք ամիս... չորս ամիս... նո՛ւ կէս տարի... մի տարի, վերջապէս: Հ՞ը, ի՞նչ էք կարծում:

— Ի՞նչպէս ասեմ, օրիորդ,—ծիծաղելով նկատեցի ես,—այդ, կրկնում եմ, ձեզանից է կախուած: Եթէ ուզենաք, կարող էք և մի քանի շաբաթում սովորել:

— Եթէ ուզենամ... ի՞նչպէս թէ եթէ ուզենամ: Ի հարկէ կուզեմ, ի հարկէ ուզում եմ: Այ, կըտեսնէք, ա՛յ, կըտեսնէք, թէ ինչպէս այս գարշելի տղայից էլ երկու շաբաթից յետոյ լաւ չեմ կարգալ,—ասաց նա և ձեռքի մատիտով խփեց կըրօր գլխին:

— Ո՞նց չէ,—նկատեց կըրայրը:

— Սո՛ւս, լը՛ր,—աստեց նրան քոյրը և իսկոյն

դարձաւ ինձ.— ներողութիւն, ի՞նչ ասացիք, որ գրեմ, մոռացայ:

— «Յամառ»:

Նա իւր ամբողջ իրանով կուացաւ թղթի վրայ և ամենայն մտառութեամբ սկսեց գրել: Նրա աշխատանքի արդիւնքը, շնայելով իւր գործ դրած ջանքերին, այնուամենայնիւ դուրս եկաւ «համար»:

— Այսպէս է,—հարցրեց թուղթն առաջ քաշելով:

— Ոչ, մի բառի մէջ դուք երկու սխալ էք արել: Նախ «յամառ» բառը հ-ով չի գրուում, այլ յ-ով: Յետոյ, վերջը դուք դարձեալ փափուկ բ էք գրել, այնպէս որ իմ ասած բառը (УПРЯМЫЙ, իրասածի) դուրս է եկել «համար», որ նշանակում է «նումեր»:

Նա բարձրաձայն ծիծաղեց, որ երկու տառ սխալ գրելուց այդպիսի մետամորֆոզա կարող էր առաջանալ:

Այն ժամանակ ես սկսեցի հանգամանօրէն բացատրել մեր տառերի գործածութիւնը: Խոստովանում եմ, երբէք և ոչ մի տեղ, ուսուցչութեանս ամբողջ վեց տարուայ ընթացքում, ոչ ոքի հետ այնպիսի սիրով, այնպիսի պարտրաստակամութեամբ չեմ պարապել, ինչպէս այդ ժամանակ նրա հետ: Ի հարկէ, նա շատ բան չէր հասկանում իմ մանրամասն բացատրութիւններից, բայց լսում էր ամենայն ուշադրութեամբ:

VII.

Այդ օրուանից տանն երկու աշակերտ ունէի—

տէրութեան և իւր քոյրը: Սկզբում երկուսի հետ էլ միասին էի պարապում: Բայց որովհետև եզրայրը միշտ ջգրացնում էր քրոջը, ուստի Քալին խնդրեց, որ իւր հետ ջոկ պարապեմ: Տանտէրս իւր աղջկայ ինձ աշակերտելու վրայ հաշտ աչքով էր նայում, մինչև անգամ խրախուսում էր նրան. տանտիրոջս կինը, որքան հասկանում էի նրա վրացերէնից, բայց աւելի շատ—նրա ձէթոտ գէմքից, դժգոհ էր և զարմանում էր, որ իւր աղջիկը, գիմնադիտնն աւարտելուց յետոյ էլ, դեռ կարիք ունի ուսանելու: Իսկ թէ եզրայրը, բժիշկը, ինչպէս էր նայում իւր քրոջ այդ կապրիզի վրայ,—այդ ես չիմացայ, որովհետև երեսը չէի տեսնում, չնայելով որ արդէն ազատ մուտք ունէի նրանց տան մէջ. նա մեծ մասամբ քնած էր լինում, արթուն ժամանակն էլ կամ բոլորովին առանձնացած էր լինում իւր սենեակում, կամ տանը չէր լինում: Բայց, կարծեմ, նա անտարբեր էր:

Հարկ չկայ սլատմելու, թէ ինչպիսի հաճութեամբ էի պարապում տանտիրոջս աղջկայ հետ: Ուսումնարանից վերադառնում էի յոգնած և շատ անգամ յուզուած էի լինում հոգաբարձուների վարմունքից կամ պաշտօնակիցներիս ինձ դէմ լարած խարդաւանքներից, որոնցից, ինչպէս յայտնի է, ոչ մի ուսուցիչ ազատ չէ: Բայց երբ Քալին մայրենի լեզուի դասագիրքն և հայոց գրութեան տեսրակը ձեռքին ազմկալի կերպով ներս էր վազում ինձ մօտ, յոգնութիւնս էլ էի մոռանում, յուզումս էլ և կարծում էի, թէ յանկարծ մի կենարար հեղուկ սրսկիցին երակներս մէջ: Ոչինչ այնքան չէի սիրում նրա մէջ, որքան նրա երեխայական պարզամտու-

թիւնը: Երբեմն յանկարծ այնպիսի մի անմեղ հարց կըտար, որ չէի կարողանում զսպել ծիծաղս: Այդպիսի դէպքերում նա նախ, կարծես, ապշում էր, թէ ինչ կայ ծիծաղելու, յետոյ ինքն էլ էր սկսում ինձ հետ միասին ծիծաղել, կարծես նոր գլխի ընկնելով, որ իւր հարցն իսկապէս ծիծաղելի էր:

Նա իւր խոստումը կատարեց. ինձ հետ սկսել էր հայերէն խօսել շարունակ. բայց երեւի մի անգամից սովորութիւնը փոխելը շատ դժուար էր, տանը դեռ ևս շարունակում էր վրացերէնը:

Նրա «տանու հայերէնը» մի ջարդուած, փշրուած, մարտիրոսացած լեզու էր, որից ռուսերէնին և վրացերէնին անտեղեակ հայը հազիւ թէ բան հասկանար. Բայց նա իւր շիմացած այս կամ այն բառը, ի հարկէ, ռուսերէն էր ասում և իսկոյն հարցնում էր, թէ այդ բառի հայեր՛ ո՞ն ինչպէս է: Նա մինչև անգամ ինձնից հարցրած ռուսերէն բառերի թարգմանութիւնների մի բառարան էր կազմել և ամեն անգամ, երբ մոռանում էր այս կամ այն բառի թարգմանութիւնը, այլ ևս ինձ չէր հարցնում, այլ խօսակցութեան ժամանակ պարբերութիւնը կիսատ թողնելով, իսկոյն նայում էր այդ բառարանին և որոնած բառի թարգմանութիւնը գտնելուց յետոյ միայն վերջացնում էր պարբերութիւնը: Պատահում էր, և շատ յաճախ, որ դասի ժամանակ մենք ըսկսում էինք զրոյց անել կողմնակի բաների մասին, և այդպիսի դէպքերում նա միշտ աշխատում էր խօսակցութիւնը լուրջ բաների վրայ դարձնել, որպէս դի աւելի շատ բառեր սովորի:

Յաւ ի սիրտ տեսնում էի, որ ինչպէս հայոց

լեզուից, այնպէս և հայոց ազգային կեանքի թէ անցեալից և թէ ներկայից ոչ մի դադափար չունի, գիտցածն էլ այնքան վայր ի վերոյ բաներ էին, որ ուղղակի ապշում էի, թէ միթէ այդ աղջիկը հայ է: Օրինակ, կըհաւատամք, եթէ ասեմ, որ նա չգիտէր այդ ժամանակուայ կաթողիկոսի անունն անգամ:

—Չարմանալի է,—ասացի,—միթէ գոնէ եկեղեցումը չէք լսել, չէ որ ամեն պատարագին յիշում է նրա անունը: Իսկ դուք, կարծեմ, գնում էք եկեղեցի:

—Միշտ գնում եմ, բայց ոչինչ չեմ հասկանում,—պատասխանեց նա:

Այդ ժամանակ ես միտք յղացայ ոչ թէ միայն հայոց զբաղիտութիւնը սովորեցնելու, այլ և ծանօթացնելու նրան հայ ազգի անցեալի և ներկայի հետ կարելոյն չափ ընդարձակօրէն:

Գործին կպել էի տարօրինակ եռանդով. պաշտօնական ուսուցչութիւնս ուսումնարանում ինձ համար դարձել էր մի երկրորդական, շատ անգամ մի ահամայ պարապունք, մինչդեռ գլխաւոր պարապունքս համարում էի Քալիին դասախօսելը: Դասախօսութիւններս լսում էր լափող հետաքրքրութեամբ: Մի անգամ տուի նրան կարգալու Խորենացու պատմութեան էմինի թարգմանութիւնը, բայց նա երկրորդ օրն ևս թ վերադարձրեց և ասաց, որ չի կարողանում կարդալ:

—Չատ համառօտ է և չոր,—պատճառաբանեց նա:—Ձեր պատմածն աւելի հետաքրքրական է: Դուք ամեն բան բացատրում էք, դրա համար ես ըմբռնում եմ, իսկ այստեղ ինձ համար ամեն բան մութն է:

Մեր պարապունքները տեղի էին ունենում երեկոները, երբ ես էլ, նա էլ ազատ էինք լինում գործերից: Սակայն նրա համար առաւօտ—երեկոյ չկար. նրա համար գործը միշտ անպակաս էր լինում տանը: Գարապունքի ամենաթունդ ժամանակը, մէկ էլ կըտեսնէիր, մայրը կըկանչէր նրան: Այդպիսի դէպքերում Քալին դժգոհութեամբ, շատ անգամ զսպած զայրոյթով շարտում էր գիրքը սեղանի վրայ և դուրս էր գնում կատարելու մօր պատուէրը, բայց շատ չէր ուշանում, էլի մտնում էր առաջուայ նման ժպտալով: Չարմանալի բարի և հնազանդ աղջիկ էր. կրգժգոհէր, կըղայրանար, շատ անգամ ուղղակի բարկացած կաղաղակէր, կըկատաղէր, բայց չէր անցնիլ մի բոպէ, և կըտեսնէիր, որ նորից ժպտում է, կարծես իսկի էլ բան չէր պատահել:

Երկու ամսից յետոյ ես արդէն հայերէն գըրքեր էի տալիս նրան կարդալու, որպէս զի վարժուի,—հարկաւ, սկզբում այնպիսի գըրքեր, որոնց լեզուն դիւրամատչելի կարող էր լինել նրան: Գիրքը կարդում վերջացնում էր շատ շուտով, այնպէս որ մինչև անգամ կտոկածում էի, թէ առանց կարդալու է վերադարձնում, բայց որքան զարմանում էի, երբ սկսում էր մի առ մի բովանդակութիւնը պատմել: Ինձ մօտ գտնուում էր Արովեանի «Վէրք Հայաստանի»-ի մի օրինակը փալաս դարձած կարտոնի կազմով, հնացած, դեղնած: Նոր տարին մօտենում էր. չեմ իմանում ինչպէս եղաւ, որ մի օր խելքիս փշեց այդ գիրքը նուիրեմ Քալիին: Եւ առանց երկար ու բարակ մտածելու գիրքը վերցրի տարայ կազմարարի մօտ, պատուիրեցի, որ փալաս դարձած կազմը պո-

կի և մի փառաւոր ոսկեղօծ կաղմ շինի: Նոր տարուայ նախօրը ստացայ հնացած Աբովեանը պըճնուած, զարդարուած նորահարսի պէս և նոր տարուառուօտը, երբ Քալին ուրախ, դուարթ ներս ընկաւ սենեակս նոր տարին շնորհաւորելու, գիրքը լուռ տուի իրեն:

— Կարդում, — հարցրեց:

— Կարդացէք և պահեցէք ձեզ մօտ:

Ըստ երևոյթին, իսկոյն գլխի շքնկաւ, թէ ինչ էի ուզում ասել, յետոյ շփոթուեց, կարմրեց:

— Այս նուէր է ինձ, — հարցրեց կամաց:

— Գրանից աւելի լաւ բան չէի կարող նուիրել ձեզ, օրիորդ, այսօրուան օրը:

Սակայն նրա շփոթմունքը շուտով անցաւ, և երեխայի նման ուրախացած հարցրեց.

— Լաւ գիրք է:

— Լաւ որ չլինի, ձեզ չեմ նուիրել:

Հետեւալ օրը, երբ ես ըստ սովորականին պարապում էի նրա հետ, նա յանկարծ կտրեց ինձ և հարցրեց.

— Դուք թաշկինակ ունի՞ք:

Ջարմացայ:

— Ինչո՞ւ էք հարցնում:

— Պատասխանեցէք, ունի՞ք թաշկինակ:

— Ունիմ:

— Տեսնեմ:

Գրպանիցս հանեցի հասարակ միտակալի թաշկինակս և տուի իրեն:

— Է՛հ, — դէն շարտեց նա: — Ուրիշ չունի՞ք:

— Ունիմ:

— Տուէք տեսնեմ:

Մնդուկիցս հանեցի երկրորդ թաշկինակս, որ միևնոյն կտորից էր, և դարձեալ տուի իրեն:

Նայեց և նորից վերադարձրեց ինձ:

— Լաւը, լաւն եմ ասում, — ասաց զայրացած:

— Իմ ունեցածս այդ է, օրիորդ:

— Ջարմանալի է, կարծես թէ չէք կարող լաւ թաշկինակ պահել:

— Ի հարկէ, չեմ կարող. փող ս՛վ է տուել, որ...

— Լաւ, լաւ, շարունակեցէք:

Չարունակեցի ընդհատուած դասախօսութիւնս, բայց այս անգամ ինքս ընդհատեցի և հարցրի.

— Լաւ, ինչնե՞րիդ է պէտք իմ թաշկինակը:

— Քիթս պէտք է սրբեմ, — ծիծաղեց նա բարձրաձայն, չարաճճի կերպով:

Այդ թաշկինակն ինձ համար մի ցաւ դառաւ. ինչքան էլ գլուխս կտորում, մտածում էի, որ իմանամ, թէ ինչին էր պէտք թաշկինակս, բան չէի հասկանում. ինչքան խնդրեցի որ ասի, չասեց. ամեն հարցնելիս ծիծաղում էր միայն:

Հինգ օրից յետոյ, ճիշտ Ջրօրհնէքի օրը, առաւօտեան, ներս մտաւ սենեակս անսովոր հանդստութեամբ, առանց ձայն-ծպուտ հանելու, սեղանիս վրայ դրեց բարակ թղթի մէջ փաթաթած մի ինչ-որ փոքրիկ բան և նոյն լուրթեամբ դիմեց դէպի դուռը: Դռան մօտ յանկարծ շուռ եկաւ, նայեց ինձ, ծիծաղեց և դուրս պրծաւ, դուռը պինդ շրկեցնելով իւր ետեկից: Ապշած վերցրի բարակ թղթի մէջ փաթաթած բանը և բաց արի. մէջը թաշկինակ էր, ութածալ, մետաքսի և այնքան բարակ, որ կարելի

էր բռան մէջ հաւաքել: Ծայրերից մէկի վրայ գար-  
մանալի նրբութեամբ ասեղնադործուած էր անուանս  
և ազգանունանս սկզբնատառերը հայերէն գրերով:

Նոր հասկացայ, թէ ինչու համար էր ինձնից  
թաշկինակ պահանջում: Անհուն երջանկութեամբ  
նրա փոխադարձ նուէրը մօտեցրի շրթունքներիս և  
համբուրեցի այն տեղը, որտեղ նրա մատներն իմ  
անուան սկզբնատառերն էին ասեղնագործել:

Ի դէպ. ամեն անգամ որ նայում էի նրա մատ-  
ներին, ինձ թւում էր, թէ նա ձեռքերն երբէք չի  
լուանում—այնքան նրա եղունգների ծայրերը լիքն  
էին լինում կեղտով: Այդ բանն ինձ ուղղակի կատա-  
ղեցնում էր: Մի անգամ չգիմացայ և նկատողութիւն  
արի: Նա սաստիկ ամաշեց, ասաց, որ կերակուրը  
գրեթէ միշտ ինքն է եփում, ամանեղէններն ինքն է  
լուանում և այլն, բայց դրանից յետոյ անսայ, որ  
նրա եղունգները միշտ կտրուած և մաքուր էին լի-  
նում, թէև առաջուայ պէս շարունակում էր կերա-  
կուր էլ եփել, ամանեղէններ էլ լուանալ:

Չգիտեմ, շատ տարօրինակ, թէ շատ բնական  
էր մեր սէրը, բայց մեր միջև երբէք ոչ սիրոյ խոս-  
տովանութիւն եղաւ և ոչ էլ սիրոյ մասին խօսակ-  
ցութիւն: Ծաղիկ, գարուն, լուսին, սոխակ և այլ  
այդպիսի բաներ չկային. ինչպէս երևում է, այդ  
ակսեսուարներով սիրում են միայն բանաստեղծնե-  
րը, իսկ մենք շատ հասարակ մարդիկ էինք: Ճիշտ  
է, մեր փոխադարձ նուէրները, ըստ երևոյթին, մի  
քիչ բանաստեղծական էին, բայց նա իմ նուիրած  
Աբովիանից կիմանար, թէ Հայաստանի վերքը սրն  
է, որից ամենևին գաղափար չունէր, իսկ նրա նուր-

րած թաշկինակն էլ ես կարող էի գործածել ամեն  
անգամ, երբ միտակալի թաշկինակներս կեղտոտուէին:  
Մեր սիրոյ լիզուն այս էր.— ծիծաղում էինք իրար  
վրայ, ծաղրում էինք իրար, նա ինձ «քնձոռտ վար-  
ժապետ» էր անուանում, ես նրան— «Քալո խարար-  
գիւնտ» (այդ բառերով սկսուող երբեմն վրացերէն  
մի հին երգ էի լսել Թիֆլիսում), մի քիչ էլ որ ա-  
ռաջ զնայցինք, խփում էինք իրար, երբեմն նա ուղ-  
ղակի ըննում էր քթիցս, ես քարշում էի նրա գի-  
տակը և... այս է, ուրիշ ոչինչ: Որից յետոյ,— այս  
էլ կարող եմ ասել,— մենք բաժանուում էինք իրարից  
իրբև միտկ ամենաերջանիկ մարդիկն աշխարհի երե-  
սին: Գտնէ ինձ համար ես այդ կարող եմ ասել:

Բայց այս կատակները լինում էին ի միջի այ-  
լոց, իսկ դասերը շարունակում էին իրենց կարգին,  
առաջուայ պէս: Հինգ-վոց ամսից յետոյ նա արդէն  
այնպէս վարժ կարգում էր հայերէն, որ այլևս շատ  
քիչ բառերի թարգմանութեան համար էր կարիք  
գզում ինձ հարցնելու: Իմ հոգացողութիւնս այդ  
կողմից այժմ միայն այն էր, որ նրա համար հայե-  
րէն գրքեր ճարեմ. իսկպէս ինքս ընթերցանու-  
թեան շատ քիչ գիրք ունէի, շատ գիրք ընկերնե-  
րիցս էի վերցնում նրան տալու համար, իսկ եթէ  
չէի ճարում, ուղղակի փողով գնում էի, առանց ու-  
շաղրութիւն դարձնելու, որ այդ բանը բաւական  
ծանր էր գրպանիս համար:

Բայց «վերջն է գովելին»:

Չգիտեմ, Քալիի հետ արդէն շափից դուրս  
մտերմական յարաբերութիւնների մէջ էի, թէ ինչ,

որով և մատնել էի ինձ նրա ծնողները աչքում, երբ  
ահա թէ ինչ պատահեց յանկարծ, անսպասելի կեր-  
պով:

VIII.

Տանտէրս առհասարակ սովորութիւն չունէր  
սենեակս մանելու. շատ-շատ ինքս էի գնում նրա  
մօտ, և մենք խիստ բարեկամաբար ճառում էինք  
քաղաքականութիւնից: Յայց մի օր նա մտաւ ինձ  
մօտ և ուղղակի, առանց այլևայլութեան ասաց.

—Մէ բան վուր ասիմ, խօսմ չիս նիղանայ:

—Հրամայեցէք,—զարմացած ասացի ես:

—Վուչ թէ հրամայի, այլ պիտիմ ինդրի: Հաի  
Ասածու, իս շատ բաւական իմ քիզմէն, բայց... զի-  
զիս ինչ կայ.—օթախս պիտիս զարդկի:

Կարծեցի, թէ սե՛նեակը յանկարծ փուլ եկաւ  
դիտիս: Ուզում էի հարցնեմ «ինչո՞ւ», լեզուս չէր  
շարժում: Տեսայ, որ տանտէրս յամառութեամբ  
նայում է ինձ և տարօրինակ կերպով ժպտում:

—Գիղիս, էլի—շարունակեց նա,—թէ ինչքան  
նիզուածկութիւն ինք քաշում: Էս իմ ազա գոխտու-  
րըս ուզում է էս քու օթախը պրիեօմնա շինի:

Եւ նա մի երկար ճառ խօսեց, կարծեմ, այն  
մասին, թէ որքան յարգում է ինձ, թէ որքան գնա-  
հատում է աշխատանքներս:

Խօսք տուի, որ վաղն և եթ կաշխատեմ ուրիշ  
բնակարան ճարել ինձ համար: Այդ բանն ասացի  
այնպիսի հանգստութեամբ, որ ինքս էլ զարմացայ-  
նայց այդ հանգստութիւնն արտաքին հանգստութիւն

էր, մինչդեռ ներքուստ այնքան շփոթուել էի, որ  
երբ տանտէրս դուրս գնաց, դեռ ևս երկար ժամա-  
նակ չէի կարողանում ուշքի գալ:

Այդ օրը Քալին, հակառակ սովորականին, չը-  
մտաւ ինձ մօտ: Այդ բանը շարմացրեց ինձ. այդ-  
պէս էլ սպասում էի: Հոգիս վկայում էր, որ նրանց  
տանն անշուշտ ինչ-որ պատահել էր իմ պատճառով,  
այլապէս ես ոչ մի կերպով չէի կարող բացատրել  
այն հանգամանքը, որ ինձ այսպէս անակնկալ կեր-  
պով դուրս էին անում բնակարանիցս. («Ազա գոխ-  
տուրի պրիեօմնան» պատրուակ էր, իհարկէ):

Սկզբում սաստիկ յուսահատուեցի, բայց յետոյ  
ինքնասիրութիւնս շարժուեց. «Ի՛նչպէս թէ ինձ  
դուրս են անում... Զատ բարի...», մտածում էի ես,  
կարծես թէ սպառնում էի, ինչ բանով—չգիտեմ:  
Ե: հետեւեալ օրը, փոխա տակ ուսումնարան գնալու,  
գնացի նոր բնակարան որոնելու: Վարձեցի առաջին  
պատահած սենեակը, ամենեկին ուշադրութիւն չզար-  
ձրի ոչ յարմարութեան և ոչ գնի վրայ, և այդ օրն  
և եթ տեղափոխուեցի: Երկու մշակ բաւական էին  
ամբողջ կայքս տեղափոխելու համար:

Գրքերս, մահճակալս, զրասեղանս, սնդուկս,  
երեք հատ աթոռս և մնացած մանր-մունր բաները  
կապած վերջացրած և մշակները շալակը տալու  
վրայ էի, երբ խանութից տուն եկաւ տանտէրս: (Ե-  
րեկոյ էր):

—Վա՛, էս շուտ իս օթախ զթի,—զարմացու  
նա.—Գեթաղվա, խօ չիս նիղացի:

—Ինչո՞ւ պիտի նեղանամ:

—Իս ինչ գիղիմ, էսէնց մէբաշ... Գիղիս, էլի,

ինչքան սիրեցի քեզ, բայց էս իմ աղա զոխտուրը...  
Մախլառ... Օթախզ վմբղի է, լաւ տիզ է, վմնց  
իս բռնի:

Պատասխանում էի կցկտուր կերպով, վերա-  
ւորուած մարդու սառնութեամբ:

Նոյնպիսի սառնութեամբ հրածեշտ տուի նրան,  
կնոջը, երեխաներին: Քալին շքացել էր: «Գոխտու-  
րը» տանը չէր: Քալիի շքեակու մասին ոչ մի խօսք  
բերնիցս դուրս չթոցրի, կարծես իսկի գոյութիւն  
էլ չունէր: Չյիշեցին նրա մասին և ծնողները: Փո-  
խադարձաբար հասկանում էինք իրար մտքինը և յա-  
մառութեամբ լուում Քալիի մասին: Բոպէն անհամ  
էր: Տանտիրոջս ձեռքը վերջին անգամ սեղմելու ժա-  
մանակ, աուի նրան սենեակիս վերջին ամսականը:  
Ի դէպ յիշեմ, որ «տէրտէրացուի» հետ ամբողջ եօթն  
ամիս պարապելու համար ոչ մի կոպէկ չէի ստա-  
ցել, իսկ սենեակիս ամսականները կանոնաւորապէս  
վճարում էի, և տանտէրս ընդունում էր, առանց  
որևէ առարկութեան, ինչպէս ընդունեց և այս ան-  
գամ:

— Լաւ, էս վուր զնում իս, բաս միր Կոլեայի  
բանը վունց պիտինք անի, —ասաց տանտէրս այն  
ժամանակ, երբ մշակներին առաջս արած՝ իջնում  
էի սանդուխքով:

— Ուզում էք, կըշարունակեմ պարապել:

— Վա, վմնց թէ ուզումինք, բաս խօս կիսաս  
չինք թողնի:

— Չատ բարի, կըզամ պարապելու, —ասացի և  
իսկոյն էլ գոջացի, որովհետեւ տանտէրս անմիջապէս  
ինչև անգամ նկատելի երկիւղով վրայ բերեց:

— 2է, չէ, ինչի՞ դու նիդութին քաշիս, ամեն  
օր գաս միր տուն, հաղիւր էրէխէն ինքը գուքայ:  
Բճին էս սահաթին կօսիմ, վուր հիզդ գայ, տունը  
սորվի, վուր էրէխին բերէ:

— Չատ բարի, թող գայ:

Սկզբում, երբ արդէն տեղափոխուած էի նոր  
բնակարանս, վերաւորանքս (չգիտեմ ինչ բանի հա-  
մար) այնքան սաստիկ էր, որ առաջին երկու-երեք  
օրը զրեթէ չէի զգում Քալիից անջատուիլս: Բայց  
յետոյ կամաց-կամաց այնպիսի մի թախիծ, այնպի-  
սի մի կարօտ տիրեց ինձ, որ երբեմն սարսափահար  
մտածում էի, թէ մի գուցէ գժուեմ: Ախրժակս կա-  
պուել էր, գիշերները բուն շունէի, ուսումնաբանում  
գասերս պարապում էի մեքենայաբար, նոր բնակա-  
րանում — մի խոնաւ, կեղտոտ, հազար ծակոժու-  
կից փշող անպիտան բնակարան — սիրտս՝ վէր չէր  
գալիս, պարապ ժամանակս թափառում էի չգիտեմ  
որտեղ: Մի խօսքով — մի տաժամելի դրութիւն, որը  
յանկարծ, անսպասելի կերպով, հակառակ կամքիս,  
եկել կաշկանդել էր ինձ ամուր: Քալիի պատկերը  
գիշեր-ցերեկ աչքիս առաջն էր: Երբեմն յուսահա-  
տութիւնից լաց էի լինում երեսայի նման: Նոր էի  
զգում, որ իսկապէս սիրում եմ նրան և առանց նը-  
բան տեսնելու չեմ կարող ապրել: Այնքան ընտելա-  
ցել էի նախկին բնակարանիս և այդ բնակարանի  
մէջ ամեն օր Քալիին տեսնելուն, նրա ձայնին, ծի-  
ծաղին, որ այժմ նոր բնակարանս, Քալիից զրկուած  
լինելս մի խիստ տարօրինակ և անտանելի բան էր  
թւում ինձ, — կարծես թէ իմ հայրենի աշխարհից  
յանկարծ պոկել շարտել էին ինձ մի օտար աշխարհ:

կարօտը սպանում էր ինձ: Բայց դարմանալի բան. Բալին չէր միայն, որին կարօտում էի տեսնել. ուրախութեամբ կըցանկանայի տեսնել նաև նրա հօրը, նրա բժիշկ եղբորը, միև շարաճճի փորրիկներին, նոյն իսկ նրա վերախօս ձեթոտ մօրը,—մի խօսքով այն ամենքին և այն ամենը, որոնց հետ կապ ունէր Բալին և որոնք կըյիշեցնէին ինձ Բալին: Այդպիսի յուսահատական զբոլթեան մէջ մի կատարեալ մխիթարութիւն էր ինձ համար Բալիի ինձ նուիրած թաշկինակը—միակ առարկան, որին նայելով, որը համբուրելով թէ կարօտս աւելի էր վառւում և թէ, միևնոյն ժամանակ, սիրաս հովանում:

Վերին աստիճանի հետաքրքրում էր ինձ այն միտքը, թէ Բալին արդեօք նոյն տանջանքներն է զգում ինձ համար, ինչ որ ես իւր համար: Բայց արդեօք սիրում էր նա ինձ... Այդ հարցը յանկարծ ծագեց գլխումս, և ամեն հանդամանք կշռագատելով, աւելի շուտ տրամադիր էի կարծելու, որ չէ, չէր սիրում: Այսպէս անկարելի բան էր, որ հրաժեշտի ժամանակ շցանկանար ինձ տեսնել: Մինչդեռ նա այդ օրն ամենեկին չերևաց, իսկ նա տանն էր, հաստատ գիտեմ, որ տանն էր: Օ՛, ի հարկէ, թաշկինակ նուիրելն աւելի հեշտ է, քան թէ սիրտը նուիրելը:

Թէօրիայով ես միշտ, եթէ ոչ անկարելի, գէթ աննորմալ բան եմ համարել սիրել առանց փոխադարձը ստանալու: Այդպիսիներին ես միշտ իրենց յարգը չճանաչող, մարդկային պատուասիրութիւնից դուրկ ողորմելի արարածներ եմ համարել, որոնց կոչումն այն է, որ ամեն բանում, առաւելապէս սի-

րոյ մէջ, փալաս լինին: Սակայն անձնական փորձս ցոյց էր տալիս ինձ, որ ուրիշ է թէօրիան, ուրիշ է գործնականը.—գրեթէ համոզուած էի, որ Բալին չի սիրում ինձ, այնուամենայնիւ զգում էի, որ զժուածի պէս սիրահարուած եմ նրա վրայ, չնայելով որ, ամենայն վստահութեամբ կարող եմ ասել, ես ամեն բան եմ, և եղել եմ միշտ, բայց ոչ երբէք փալաս:

Սակայն Բալին ինձ սիրում էր, թէ ոչ,—այդ մասին դեռ ես հաստատ ոչինչ չգիտէի. ես միայն կասկածում էի, որ չի սիրում, և կարիք ունէի ստուգելու, ցանկանում էի ստուգել, հէնց թէկուզ նրա համար, որ թէօրիաս շջախջախուէր իմ աչքում:

Բայց ինչպէս ստուգէի. գնայի նրանց տուն, նամակ գրէի. Ինչքան էլ որ սիրահարուածների մէջ մեռնում է սեպհական ա ժանապատութեան զգացումը, այնուամենայնիւ իս մէջ դեռ ես այնքան ամուր էր մնացել այդ զգացումը, որ ոչ մի պայմանով այլևս երբէք ռոք չէի կոխիլ նրանց տուն այն բանից յետոյ, երբ ինձ վաւեր էին այնտեղից: Նամակ էլ չէի ուզում գրեմ ուղղակի հպարտութիւնից: Ես սիրում էի նրան, պատրաստ էի տանջուելու, բայց նրա սէրը իբրև ողորմութիւն խնդրել—այսպիսի բան, ի հարկէ, երբէք չէի անիլ, որովհետև նախ՝ դա միտք չէր ունենալ և երկրորդ՝ մուրալը միշտ ստորացնում է մարդու, էլ շեմ խօսում այն մասին, որ սէրը մուրալ չի կարելի:

Բալիի դէպի ինձ տածած զգացումը ստուգելու համար մնում էր միայն մի ճանապարհ. այդ այն էր, որ պէտք է հարցուփորձ անէի նրա եղբօ-

ըր, որը դասերը շարունակելու համար պէտք է ամեն օր գար ինձ մօտ: Յայց արդէն անցել էր մի ամբողջ շաբաթ, որ ես տեղափոխուել էի նոր բնակարանս, և Կոլեան չկար, չէր գալիս: Ես չէի հասկանում, թէ արդեօք ինքը չէր ուզում գալ ծուլութիւնից, թէ ծնողները չէին ուզում ուղարկել, որ պէտքի իրենց և իմ միջև եղած բոլոր յարաբերութիւններն իսպառ կտրեն, չնայելով որ հրաժեշտի ժամանակ աշակերտիս հայրն ինքը թախանձեց, որ իւր որդու հետ շարունակեմ սլարապել, և մինչև անգամ ծառային էլ հետս ուղարկեց, որ նոր բնակարանիս տեղը սովորի երեսային բերելու համար:

Մի շաբաթը դարձաւ երկու շաբաթ և անսովոր օր տեսնեմ Կոլեան, գրքերը ձեռքին, ներս մտաւ սեննակս: Այնպէս ուրախացայ, որ կարծես թէ հարազատ եղբօրս էի տեսնում:

— Որտեղ էիր մինչև հիմա, ինչո՞ւ չէիր գալիս, հիւանդ լսօ չէիր, — սկսեցի հարցուփորձ անել:

— Ոչ, հիւանդ չէի. մայրիկս չէր թողնում, որ գամ:

— Մայրիկդ:

— Այո:

— Ինչո՞ւ:

— Ես ի՞նչ գիտեմ:

— Լաւ, հապա ինչո՞ւ հիմա եկար:

— Հայրիկս ուղարկեց:

— Ուրեմն հայրիկդ ուզում էր, որ գամ:

— Այո: Քայց մայրիկս միշտ հակառակում էր:

Այսօր մինչև անգամ կտուեցին իրար հետ:

— Կոտեցին...

— Այո: Մայրիկս այնպէս շարացած էր, որ գրքերս խլեց ձեռքիցս և բակը շարտեց: Տեսէք, այս գրքի կազմը կտորուել է, իսկ սրանից անա երեք թերթ պատուել:

— Իսկ քոյրդ:

— Քոյրիկս լաց էր լինում:

— Լաց էր լինում...

— Այո: Այնպէս սաստիկ, այնպէս սաստիկ լաց էր լինում, որ իմ լացս էլ եկաւ:

Ես այլևս չկարողացայ տիրապետել ինձ:

— Սպասիր... Ինչպէս թէ լաց էր լինում: Ինչո՞ւ էր լաց լինում:

— Մայրիկս սաստիկ անիծում էր նրան:

— Իսկ հայրդ:

— Հայրիկս չէ, նա պաշտպանում էր քոյրիկիս: Իսկ վերջն այնպէս սաստիկ բղաւեց մօրս վրայ, որ մայրիկս լուեց և գնաց Վանի: Ին ծիծ տալու: Յետոյ հայրիկս հրամայեց ինձ, որ բակից հաւաքեմ գրքերս և ծառայի հետ գամ ձեզ մօտ:

Ինձ համար բոլորովին անսպասելի այդ բաները լսելուց յետոյ, ահամայ մտախոհութեան մէջ ընկայ: Խօսք չկայ, որ այդ բոլորն իմ պատճառով էր. — Քալիի մայրը հակառակ էր ինձ, հայրը իմ կողմն էր: Վերջին հանգամանքն անսպասելի նորութիւն էր ինձ համար:

Այդ օրը իբր թէ պարապեցի Կոլեայի հետ. դասի միջոցին հարցերը տալիս էի մեքենայաբար, պատասխանները լսում էի ուշադրութեամբ:

«Քոյրիկս լաց էր լինում» — այս խօսքերով էր գրադուած միտքս: Եւ չգիտեմ, այդ խօսքերը ցըն-

ծուծութիւն էին պատճառում ինձ, թէ խորին թախ-  
 ծութեամբ համակում սիրաս. զիտեմ միայն, որ դէ-  
 պի Քալին իմ տածած կարօտս իւր դադաթնակէ-  
 տին հասաւ: Այնպէս ցանկանում էի, որ այդ բո-  
 պէին նա մօտս լինէր, նայէի նրա աչքերին, լսէի  
 նրա ձայնը... Կոլեայի ասածներէց պարզ էր ինձ  
 համար, որ մայրն իրեն յատուկ լեզուի զօրաւոր  
 արտայայտութիւններով յանդիմանութիւններ էր  
 կարդում աղջկան իմ պատճառով, և աղջիկը լաց էր  
 լինում—արդեօք ինձ սիրելուց և նրան համար, որ  
 չէր կարող մօրը զիմադրել, թէ այն պատճառով,  
 որ մօր յանդիմանութիւններն անարգար էր համա-  
 րում, որ ինքն ինձ չէր սիրում: Այդ բանը դարձեալ  
 հանելուկ մնաց ինձ համար մինչև հետեւեալ օրը:  
 Հետեւեալ օրը Կոլեան մտնելուն պէս առաջս  
 դրեց մի գիրք, որը վերջին անգամ տուել էի Քա-  
 լին կարգաւու:

—Այս քայրիկս ուղարկեց, ասաց, որ ձեր գիր-  
 քնն է, և ասաց, որ իւր կողմից շնորհակալութիւն  
 յայտնեմ:

—Եւ շատնց, որ ուրիշ գիրք տամ:

—Ոչ:

Այդ պատասխանը մի քիչ տհաճոյ թուաց ինձ:

—Ի՞նչպէս է նա, էլ չի լաց լինում:

—Ո՞վ, քայրիկս: Գիտէ՞ք, պարոն, նա շատ է

դարդ անում:

—Ինչի՞ համար:

—Ձեզ համար:

—Վահ...

Այդ բացականչութիւնն ակամայ դուրս թռաւ

բերնիցս ո՛չ թէ նրա համար, որ այդպէս յանկարծ  
 իմացայ Քալիի ինձ համար դարդ անելը, այլ նրան  
 համար, որ իմ կարծած բքամխտ տէրաէրացու աշա-  
 կերտս այդ բանը նկատել էր: Էլ սուս արի, բան  
 չհարցրի, կարծես թէ նրա քոյրը գոյութիւն չունէր  
 ինձ համար, մինչդեռ իսկպպէս այդ բոպէից Քալին  
 գոյութիւն ունեցաւ ինձ համար...

Ուրեմն այլ ևս կասկած չկար,—Քալին սիրում  
 էր ինձ, նա լաց էր լինում, նա դարդ էր անում  
 ինձ համար... Հարկաւոր է, որ ասեմ, թէ ինչպիսի  
 անազնին երջանկութիւն էր այդ գիտակցութիւնն  
 ինձ համար...

IX.

Կոլեան դարձաւ իմ «կռունկը» (յիշում էք—  
 «Կռունկ, հայոց աշխարհէն կապրիկ մը շունիս»):  
 Ամեն օր նրան սպասում էի իմ անհամբերութեամբ,  
 իսկ եթէ մի օր ինչ-ինչ պատճառներով կամ կիրա-  
 կի օրերը չէր գալիս դասի և ևս հնարաւորութիւն  
 չէի ունենում նրանից տեղեկութիւններ առնելու  
 Քալիի մասին,—իստա տխուր էի գգում ինձ: Կո-  
 լեան այն հասակումն էր, երբ թւում է, թէ երե-  
 խան ամեն բան հասկանում է և երբ մարդ դժուա-  
 րանում է նրա մօտ ամեն բանի մասին խօսել. այդ  
 հասակում երեխաներն իսկպպէս շատ քիչ բան են  
 հասկանում, հասկացածն էլ, եթէ այդ վերաբերում  
 է իրենց հասակից դուրս բաներին, շատ մութ, ան-  
 որոշ է լինում, և նրանք ամենեկին չեն էլ աշխատում  
 խորամուտ լինել: Բայց ասած է՝ «գող, սիրտը գող».

կասկածից ինձ թւում էր, թէ Կոլեան արդէն նկատել և շատ լաւ էլ հասկանում է, որ ես ու իւր քոյրը սիրում ենք իրար: Թերևս նրա թափանցողութեանն այդքան մեծ նշանակութիւն չտայի, եթէ նա ուղղակի շատէր ինձ, որ իւր քոյրը «զարդ է անում» ինձ համար: Եւ չնայելով, որ այդ գլխակցութիւնն ինձ բաւական անհամ դրութեան մէջ էր դնում նրա առաջ (սէրը մի այնպիսի զգացում է, որ միշտ ուղում է թարուն մնալ ուրիշի հայեացքից), այնուամենայնիւ չէի կարողանում դիմանալ և սկսում էի հարցուփորձ անել Քալիի մասին, հարկաւ սկսելով հօրից, մօրից, «դոխտուրից», երեխաներից, շատ անգամ էլ բոլորովին կողմնակի բաներից: Հարցուփորձս անում էի արտաքին անտարբերութեամբ, բայց պատասխանները լսում էի ներքին լափող հետաքրքրութեամբ: Ամեն մի աննշան մանրամասնութիւն ինձ համար մի անազին գիւտի արժէք ունէր:

Կոլեան հազիւ մի ամիս կանոնաւորապէս ամեն օր գալիս էր դասի, բայց յետոյ դադարեց ինձ մօտ յաճախելուց: Խիտս կասկածի մէջ ընկայ.— չլինի՞ թէ, մտածում էի, Կոլեան պատմելիս է եղել տանը, թէ ինչպէս ես հարցուփորձ եմ անում իրեն իւր քրոջ մասին, և ծնողներն արգելել են այլևս գալ ինձ մօտ: Բայց հինգ օրից յետոյ նրանց իմերիկ ծառան եկաւ և ասաց, որ Կոլեան հիւանդ պառկած է և դրան համար չի գալիս դասի: Խոստովանում եմ, այդ բանը ոչ թէ ակրեցրեց, այլ ուրախացրեց ինձ, որովհետեւ այդ դէպքը մի շատ յարմար առիթ էր ինձ համար, որ վնայի նրանց տուն և հիւանդ աշակերտիս այցելելու պատրուակով վերջա-

պէս տեսնէի նրան, որի կարօտը սարսնում էր ինձ: Եւ նոյն օրն եեթ, երեկոյեան, դնացի:

Դեռ Քալիենց ամբը շփօտեցած՝ նրանց բակից ինչոր ճղճողցի և բղաւոցի ձայներ լսեցի: Եւ երբ ներս մտայ բակը, ահամայ կանդ առայ սպաշած: Բոլոր կենդանիքը դուրս էին թափուել աներից: Վերևը սլատշգամբում կոնգնած էր Քալիի մայրը և ականջ ծակող ձայնով, վերին աստիճանի արագահոս բառերով ինչ-որ ճղճում էր վրացերէն, ներքևը, բակումը, կապի թեկին ուսերին գցած, գլխարկը ձակափից յետ քաշած, կանդնած էր Քալիի հայրը և նոյնպէս ինչ-որ բղաւում էր: Երևում էր, որ նա մի քիչ «խմած» էր: Մարդ ու կին, երկուսն էլ կուռում էին, սև հեռ-յայտնի շէր: Ըսկզբում կարծեցի, թէ կուռում են բոլոր կենդանիքի հետ, բայց երբ տեսայ, որ կենդանիքը բոլորովին հանդիսաւ և լուս լսում են զրանց, հասկացայ, որ նրանք հանդիսաւ են ելին, «թամաշա» էին անում միայն:

Վերին աստիճանի հետաքրքրուած, մօտեցայ ասնախրոջս, բարեկցի և հարցրի, թէ ինչ էր պատահել:

— Էլ ի՞նչ ինչ է պատահի, — շարունակեց նա բղաւել, առանց բարես առնելու և ընդունելով ինձ այնպէս, որ կարծես թէ ամեն օր տեսնում էինք իրար հետ: — Էս շան վուրթիքն ուղում ին սող բազը կտտորի: Մէկին էրէզ թարեցին, էրկուսն էլ, ասում ին, էսօր ին հիւնդացի: Այսպէր, շիմ ուղում, թող դուս դնան, էլի: Տունը իմս չէ, վնս: Առանց էն էլ, հառամ ըլի, քրիճը իսօմ շին տալի, դուս զը-

նան էլի: Ուզում ին, վուր պուլիցով դուս անիմ: Էս բազումը էսքան էրէխէրը կան, բաս միխկը շին: Իմ Կուլիս խօ հիւնդացրիք, տօ անաստուճնիր, ուզում էք, վուր սաղ քուլիաթս կոտորիք:

Որովհետեւ տանտէրս իւր վերջին խօսքերն ուղղեց բակում գանուող այն սենեակի հասցէին, ուր սպրում էր «պիանիցը», այդ պատճառով վերջապէս հասկացայ, որ նրա և կնոջ կուին այդ սենեակում սպրողներին հետ էր: «Պիանիցի» տան դուռը փակ էր, լուսամուտներին վարդոյրները ցած էին թողուած, այնպէս որ կարելի էր կարծել, թէ տանը ոչոք չկայ:

Մարդ ու կին անողորմ կերպով բղաւում ճղաւում էին, կինը վերեկից, մարդը ներքեկից: Տանտէրս սպառնում էր իսկոյն և եթ «պուլիցա» կանչել: Չուրած մնացել էի մօտը կանգնած, չէի իմանում ինչ անեմ: Գրութիւնս բաւական անհամ էր. հիւր էի եկել, իսկ վրաս ուշադրութիւն դարձնող չկար: Աչքերովս որոնում էի Քալիին.—չէր երևում: Այսպիսի ազմուկի մէջ նրա շերեւալն ինձ բաւական դարմանալի էր թւում: «Երևի տանը չէ» մտածեցի ես և զըզջացի, որ եկել էի հէնց այն ժամանակ, երբ նա տանը չէր, միշդեւ չէ որ նրա համար էի եկել:

Չգիտեմ ինչով պիտի վերջանար այդ տարօրինակ տեսարանը, եթէ այդ ժամանակ բակի դռնից ներս շմտէք սանաիրոջս բժիշկ որդին: Չնայելով իւր անտարբերութեանը, նա, իբրև ինտելիգենտ մարդ, ըստ երևոյթին, վիրաւորուեց այդ գուհկական ճիշ ու աղաղակներից: Մեզմ նախատական կղանակով նա մի քանի յորդորներ կարգաց հօրը,

հանգստացրեց նրան, յետոյ բարեկց ինձ, և երեքս միասին բարձրացանք պատշգամբը: Ոորովհետեւ մայրը պատշգամբում դեռ ևս շարունակում էր իւր ճըղճոցը, այդ պատճառով որդին ուղղակի բարկացած դուստց նրա վրայ, թէ ի՞նչ է ամբողջ բակը զլխին հաւարել:

Մայրն իսկոյն լուեց, սակայն—ինձ այդպէս թուաց—որ թէ որդու բարկութեան վրայ, այլ ինձ անսպասելի կերպով տեսնելուց: Այնքան դադարած էր, որ, երևի, բակում չէր տեսել ինձ և յանկարծ տեսնում էր միայն այժմ, երբ ես իւր ամուսնու և որդու հետ կանգնած էի իւր որդու առաջ: Նա նայեց դէմքիս ապշած, կարծես հարցնում էր ինքն իրեն. «սա որտեղից լոյս ընկաւ»:

—Ես եկել եմ Կուլեային տեսելու, կարելի է որ ինձ ցոյց տուք նրան,—վերջապէս միջոց ունեցայ այցելութեանս նպատակը յայտնելու:

Չգիտեմ ձայնի՞ս վրայ, թէ ինչ, սենեակներից մէկի դուռը յանկարծ աղմկալի կերպով բացուեց և զրեթէ դուրս վազեց Քալին:

—Վերջապէս դուք եկար,—բացականչեց նա լացուկումած աչքերով:—Ա՛խ, Կուլեան շատ հիւանդ է... Մաշա, ինչ եղար մինչև այժմ,—յանդիմանութեամբ դիմեց նա եղբորը, յետոյ, անմիջապէս ծնողներին դառնալով, նոյն յանդիմանութեամբ նկատեց.—Իսկ դուք էլ հիմա էք ժամանակ գտել կուտելու...

Մի րոպէից մենք ամենքս էլ հիւանդ Կուլեայի սենեակումն էինք. նա սարսափելի տարութեան մէջ էր, երեսը կարմիր վարդ էր կարել և, կարծես, փրուել էր. բորբոքուած աչքերով, անմիտ հայեաց-

քով նա նայում էր մերթ սրան, մերթ նրան և շա-  
ղուած կաթիլ գոյն ունեցող լեզուի ծայրով անդա-  
դար լսատում էր շրթունքները: Փորձեցի լսօսել  
հետք. խիստ խլացած ձայնով ինչ-որ պատասխան-  
ներ տուեց, որոնցից բան հասկացայ: Նա դիֆտե-  
րիտ ունէր: Քժիչկը, իմ և հօր օգնութեամբ, լեա-  
պիսով այրեց նրա կողորդը: Այդ օպերացիայի ժա-  
մանակ երեխայի մայրը մօր համար տարօրինակ  
քաջութիւն ցոյց տուեց, մինչդեռ քոյրը, այն ժամա-  
նակ, երբ ես ուժեղ ձեռքերիս մէջ էի առել հիւանդ-  
դի բարբոթուած գլուխը, իսկ հայրը բռնած ունէր  
նրա ձեռքերը, այնպէս ծեծուում, լաց էր լինում,  
որ, կարծես, մորթում էին եղբորը:

Խօսք չկայ, որ այսպիսի պարագաներում, իմ  
և Քալիի տեսակցութիւնը ոչ մի լազաք չունեցաւ:  
Բայց մի բան, որ ինձ բոլորովին հիասթափեցրեց,  
այդ այն էր, որ Քալիի մէջ դէպի ինձ սիրոյ ոչ մի  
նշոյլ չտեսայ: Նա տարօրինակ կերպով ցրուած էր.  
արտասուքը չէր ցամաքում նրա աչքերից: Մի ժա-  
մից աւելի էր, որ նստած էի նրա հետ իւր հիւանդ  
եղբոր սենեակում, և այդ բոլոր ժամանակ նա հա-  
զիւ մի-երկու անգամ ուշադրութիւն դարձրեց ինձ  
վրայ. նրա բոլոր հոգացողութիւնը իւր եղբոր հա-  
մար էր: Ճիշտ է, եղբոր հիւանդութիւնը շատ վտան-  
գաւոր էր, իսկ Քալին սաստիկ սիրում էր առհասա-  
բակ իւր բոլոր եղբայրներին ու քոյրերին, բայց  
մի՞թէ ..

Կոյեայի սենեակիյ դուրս եկայ յուսահատ  
գրութեան մէջ: Եթէ առաջուց իմանայի, կամ գէթ  
կատկածէի, թէ այնպէս հիասթափուելու եմ, ի հար-

կէ աւելի ուրախ կըլինէի, որ չգնայի նրանց տուն,  
քան թէ գնացի: Բայց մի բան առժամանակ մոռաց-  
նել տուեց դրութիւնս:

Երբ սանդուղքներով իջայ բակը և քայլերս  
ուղղեցի պէպի փողոց, «պիանիցի» սենեակի մօտով  
անցնելիս մի օտարտի բան գրուեց ուշադրութիւնս:  
Ներսից ինչ-որ սարսափի խիստ զսպած ձայն էր  
լսում: Ակամայ կանգ առայ և ահանջ դրի: Սե-  
նեակի դուռն առաջուայ պէս փակ էր, լուսամու-  
ների վարագոյրները ցած էին թողուած և, արդէն  
մութը լինելով, երեւում էր, որ ճրագ էր վառուած  
ներսը: Ներսից լսուող ձայնը սկզբում զսպած աղա-  
ղակի էր նմանում, կարծես մէկին խիստ զգուշու-  
թեամբ կանչում էին, բայց յետոյ այդ ձայնը սկսեց  
կամաց-կամաց բարձրանալ և յանկարծ այնպիսի  
անդուսպ ճիչերի փոխուեց, որ մազերս փշաքաղուե-  
ցին: Ինձ այնպէս թուաց թէ «պիանիցը» դարձեալ  
ծեծում կամ մորթում է կնոջը, և վաղեցի դէպի  
նրանց դուռը: Գուռը միայն ետ էր դրուած, այն-  
պէս որ հրելուս պէս խսկոյն բաց եղաւ, և ես ներս  
ընկայ առաջուայ պէս «պիանիցին» խեղդելու պատ-  
րաստութեամբ: Բայց այս անգամ ինձ վիճակուած  
էր տեսնել մի ուրիշ խիստ ցաւալի պատկեր:

Մայրը նստած էր իւր երկու՝ դիֆտերիտով  
հիւանդ երեխանց անկողնի մօտ, թախտի վրայ.  
մէկին առել էր գիբկը, շարժում էր ձեռքերով և,  
սարսափահար նայելով նրա դէմքին, աղաղակում էր.  
— Վարսենիկ... Վարսենիկ ջան... Վարսե-  
նիկ...

Երեխայի գլուխը թուլացած ետ էր ընկել մօր

կռան վրայ, բերանը բաց էր, աչքերը շուած էին մնացել:

— Օգնեցէք, ի սէր Աստուծոյ,— աղաղակեց խեղճ մայրը, երբ տեսաւ ինձ:

Առաջ վազեցի, երեխան խեցի գրկից, բայց նա արդէն մեռած էր:

Ես միանգամայն հրաժարուում եմ թշուառ մօր վիշտը, յուսահատութիւնը նկարագրելուց. չեմ կարող: Երկու ձեռքով նա այնպէս էր խփում գլխին ու ծնկներին, որ ինձ թուաց, թէ խելագարուել է: Մեռած երեխային ջոկ պառկեցնելով, փորձեցի հանգստացնեմ նրան, ասում էի, որ խնայի իրեն, մտիկ տայ միւս երեխային, որն այդ ընկերին հոգեվարք գրութեան մէջ էր, չէր լսում ինձ, վայ տալով շարունակում էր թակել գլուխն ու ծնկները:

Թշուառ մօր յուսահատական աղաղակները մէջ յանկարծ ուշադրութիւնս գրաւեց մի տարօրինակ խումփոց: Յետ նայեցի տեսայ, որ յատակին ձգուած խալիչի վրայ շնթուկած է «պիանիցը»: Այնքան խորքնի մէջ էր, որ թնդանօթ էլ արձակէին տկանջի մօտ, չէր դարձնի: Այնպիսի մի կատաղութիւն զգացի, որ քիչ մնաց վրայ վազէի և տեղնուտեղը շանսատակ անէի արացիներէս տակ: Այդ մարդը մարդկային ամեն տեսակ զգայում գոհել էր Բաքոսին:

Քիչ չէր զայրացնում ինձ և այն հանգամանքը, որ բազում ապրող այնքան հարեաններէց ոչ ոք, ըստ երևոյթին, չէր կարեկցում այդ թշուառ կոտորտանտէրը նոյն խակ գուրս էր անում նրան բնակարանից այն ժամանակ, երբ նա նստած էր իւր երկու հոգեվարք երեխաների մահճի առաջ:

Այդ երեխաներից մէկն արդէն մեռած էր, պէտք էր ազատել գոնէ միւսին, քանի շունչը դեռ բերանումն էր: Եւ ես վազեցի, որ բժշկին, տանտիրոջս որդուն, բերեմ: Պատշգամբում ինձ հանդիպեց Քալին:

— Ո՞րտեղ է բժիշկը, — բացականչեցի, դիմելով նրան, կարծես թէ նրա վրայ էլ բարկացած լինէի:

— Ի՞նչ է պատահել, դուք այնտեղ էիք, — խիստ վախեցած հարցրեց նա:

— Այո: Երեխաներից մէկն այս ընկէիս մեռաւ, պէտք է փրկել գոնէ միւսին: Ո՞րտեղ է բժիշկը: Քալին ներս վազեց:

Երկու ընկէից նա դուրս եկաւ եղբօր հետ:

— Ի սէր Աստուծոյ, մեղք է այն կինը, օգնեցէք, — դիմեցի բժշկին:

Բժիշկին խեղճ հետեւեց ինձ:

Բայց մենք հաղիւ ոտնորս սանդուղքի առաջին աստիճանից ցած էինք դրել, երբ «պիանիցի» բնակարանից մի սոսկալի ճիշ ստիպեց մեզ ուղղակի գլխապատառ ներքև վազելու:

Երբ ներս վազեցինք «պիանիցի» բնակարանը, թշուառ մօրը տեսանք յատակի վրայ նստած ծնկները ծեծելիս:

Արդէն մեռել էր և միւս որդին:

Տեսեալ օրը, երեկոյեան, երբ ես գնացել էի Կոլեային այցելելու, «պիանիցի» տանից գուրս բերին մեռած երկու երեխանց փոքրիկ դագաղները. մի դագաղը կռան տակն էր առել ժամկոչը, միւսը — մի մշակ: Դագաղները հետեւց դուրս եկաւ «պիանիցը», գլուխը կրծքին խոնարհած և ձեռքերը խաշած:

ես հաւատացած եմ, որ այդ բոլորէին էլ նա «խմած» էր: Չեմքում երեւաց նրա կինը, սալտակ շթի դերիայով, առաջուանից աւելի կմադրացած: Յամար, անմիտ աչքերով նա նայեց իւր երկու երեխանց դազադների ետեւից. նրա շթունքները շարժուած էին, բայց ձայնը չէր լսուած: Յետոյ, երբ արդէն դազադները դուրս էին տարել բակից, նա նստեց դռան շեմքին և ամենայն ուժով սկսեց երկու ձեռքով ծեծել գլուխը: Չուրջը հաւաքուած հարեան կանայք վեր կացրին նրան և ներս տարան:

Կեանքիս մէջ չեմ յիշում մի աւելի արագիկական տեսարան, քան այդ.—երկու օրուայ մէջ մայրը թաղում էր իւր երեք երեխաներին: Ակամայ միտս եկան իւր ամուսնու ձեռքով անդադար ծեծուած թակուած այդ թշուառ կնոջ ինձ ասած խօսքերը. «Ո՛ւմ համար եմ ապրում ես, ո՛ւմ համար կարող եմ ապրել: Երեխաներիս համար չէ, որ ապրում եմ»: Այդ երեխաներն այլևս չկային. երեքն ունէր, երեքին էլ թաղեց, և, յիշաւի, էլ ո՛ւմ համար պիտի ապրէր.—ամուսնու համար, որը դազանարար թակում էր նրան:

Երբ այդ մասին խօսում էի Քալիի հետ, նրա աչքերի մէջ արտասուք էր խաղում: Արդէն այն ժամանակ, երբ երկու փոքրիկ դազադները դուրս բերին «պիանիցի» անից և մեռած երեխանց թշուառ մայրը կոծում էր իւր գլուխը, Քալին լաց էր լինում աղի-աղի: Ջարմանալի առատ արտասուքներ ունէր:

Քարեքաղաքար, Կոլեան այդ օրը լաւ էր, այնպէս որ քայրն իւր եղբօր համար կարող էր բոլորովին հանգիստ լինել: Իսկ երբ երբորդ օրը դար-

ձեալ գնացի Կոլեային այցելելու, նա բոլորովին լաւ էր, այլևս ոչ մի վտանգ չկար: Քալին այնքան ուրախ էր այդ բանի համար, որ մինչև անգամ ձեռքիցս բռնած ներս տարաւ Կոլեայի սենեակը, նոյն իսկ մօր ներկայութեամբ, որից ես ուղղակի վախենում էի: Բայց մայրը, ըստ երևոյթին, սկսել էր հաշտ աչքով նայել ինձ վրայ. երեկ տեսնում էր, որ ես ոչ մի վտանգ չեմ սպառնում իւր աղջկան և իւր աղջիկը շատ էլ գժուած չէ ինձ համար: Չգիտեմ, նա սխալմամ էր, թէ ոչ, բայց...

Աւելի լաւ է պատմութիւնս շարունակեմ այնպէս, ինչպէս որ դէպքերը կատարուեցին:

X.

Կոլեայի առողջանալց յետոյ, երբ նա նորից սկսել էր գալ ինձ մօտ դասերի, ես այլևս առիթ չունէի Քալիինց տուն գնալու, հետեւաբար նորից գրեկուած էի մնացել նրա տեսութիւնից: Բայց այժմ աւելի, քան առաջ, ես գժուած էի այդ աղջկայ համար: Իմ դէպի Քալին տածած զգացմանս վրայ ոչ մի տարակոյս չունէի, բայց թէ նա էլ սիրում էր ինձ, թէ ոչ,—այդ բանն ինձ սաստիկ մտատանջում էր նորից, որովհետեւ նոյն իսկ այն ժամանակ, երբ Կոլեայի համար ամեն վտանգ անցած էր, և քոյրն այլևս առիթ չունէր միմիայն նրանով զբաղուած լինելու, մինչև անգամ այդ ժամանակ, երբ ես նրա մօտ էի լինում, մի առանձին բան չէի տեսնում նրա մէջ, որից կարողանայի եզրակացնել, թէ այդ աղջիկը սիրում է ինձ, թէև, ճիշտ է, չափազանց հե-

տարբերում էր ինձնով և շատ էր ուրախանում, երբ տեսնում էր ինձ:

Մտատանջութիւնս փարատելու և բռնելիք դիւրքս որոշելու համար, սաստիկ ցանկանում էի գէթ մի անգամ առանձին տեսնէի նրան և ուղղակի խօսէի հետը: Սակայն առանձին սրտեղ տեսնէի, տանն անկարելի էր, որովհետև նախ, ինչպէս ասացի, Կոլեայի առողջանալուց յետոյ, ես այլևս առիթ չունէի նրանց տուն գնալու, իսկ եթէ երեսս պնդէի և գնայի էլ, մայրը, ինչպէս միշտ, այս անգամ էլ մօտներս շարունակ ցցուած պիտի մնար: Փողոցումն էլ կամ ուրիշ տեղ նրան առանձին տեսնելը նոյնպէս անկարելի էր, որովհետև նա պատկանում էր այն հայ ընտանիքների կարգին, որոնց մէջ սնուածմեծացած աղջիկը, մանաւանդ երբ նա «մարդու տալու» աղջիկ է, երբէք չի համարձակիլ մենակ դուրս գալ անից, և դուրս եկած ժամանակ անպատճառ մէկը պիտի ուղեկցի նրան, ամենից յաճախ, իհարկէ, մայրը: Թիֆլիսի փողոցներում ինչ հայ աղջիկ էլ որ տեսնէր այդ ընտանիքներից, համարուած եղէք, որ հեռու-մօտիկ նրան անպատճառ հետևում է իւր աշալուրջ ցերեքը «չիխտի-կոպին» գլխին:

Մի անգամ, մի հիանալի երեկոյ—մայիսի վերջերին էր—գրօսանքի գնացի Մուշտայիդ: Ամինսին մաքումս չկար, թէ այդտեղ կըհանդիպեմ Քալինին, մինչդեռ նա այնտեղ էր իւր բժիշկ-եղբոր հետ: Նրանք նստած էին սեղաններից մէկի մօտ, մի շիշ զովարար խմիչք առաջները դրած: Այգու հրապարակում շատ քիչ մարդ կար, որովհետև օրը հասա-

րակ օր էր և այդ երեկոյ էլ նուագածունների խումբ չկար:

Հրապարակը մտնելուս պէս Քալին խօսոյն նկատեց ինձ և, տեղից վեր թռչելով, յիսուն-վաթսուն քայլ հեռաւորութիւնից ձեռքով սկսեց կանչել ինձ:

Միբոս այնպէս թրթռաց ուրախութիւնից, որ մի բոպէ շունչս կարուեց:

Եղբայրն իւր աթոռի վրայ ծուլարար շուռ եկաւ իմ կողմն այն ժամանակ, երբ ես արագ քայլերով մօտենում էի նրանց:

Քալին մինչև իմ մօտենալս կանգնած մնաց և կանգած էլ սեղմեց ձեռքս: Դէմքին մի հիանալի շառագոյն էր պատել:

Եղբայրը նստած ս ուղից մի աթոռ մօտ քաշեց և հրաւիրեց, որ նստեմ, նստեցի: Նստեց և Քալին: Այդ անակնկալ հանդիպումից այնքան շփոթուած էի, որ շիմացայ ինչ խօսեմ: Եթէ չեմ սխալուում, Քալին էլ նոյն դրութեան մէջ էր: Եւ որովհետև բժիշկն էլ խօսել չսիրողներից էր, այդ պատճառով երեքիս լուծիւնը մի շատ տարօրինակ և ճնշող բան հանդիսացաւ: Սակայն, էլի բժիշկն եղաւ, որ խօսք բաց արեց:

— Զրօսանքի էք եկել, հա՛, — հարցրեց անտարբեր ձայնով:

— Այո: Եղանակը հիանալի է, — վրայ բերի ես:

— Անկարելի է այսպիսի եղանակին տանը նստել: Կոլեայի հետ դասերը վերջացրի և եկայ այստեղ:

— Դուք գիտէիք, որ մենք այստեղ կըլինինք, —

հարցրեց, մի ինչ-որ խորամանկ, խորհրդաւոր ժպիտ  
դէմքին:

Բժշկի այդ հարցն ինձ համար բաւական ա-  
նակնկալ էր: Սկզբում շփոթուեցի, ակամայ մի հար-  
ցական հայեացք ձգեցի Քալիի դէմքին, յետոյ դար-  
ձեալ նայեցի բժշկին և, արագութեամբ տիրապետե-  
լով ինձ, հանգիստ կերպով, նոյն իսկ սառնութեամբ  
հարցրի.

— Ի՞նչպէս հասկանամ ես ձեր այդ հարցի  
իմաստը:

Բժիշկն այս անգամ բարձրաձայն ծիծաղեց:

— Գուք իմաստ էք որոնում իմ հարցի մէջ, —  
բացականչեց. — Օ՜, բոլորովին հանգիստ կարող էք  
լինել, իմ հարցը ոչ մի իմաստ չունէր: Ես միայն  
հարցրի այնպէս...

Եւ նա, շարունակելով ծիծաղել, իրեն ոչ-յա-  
տուկ եռանդով սկսեց ձեռնափայտով թըրթիկ-  
թըրթիկացնել սեղանը:

— Մի բաժակ գարեջուր, կարծեմ, չէք մեր-  
ժիլ, — ասաց:

Ոչինչ չպատասխանեցի:

Մի տասը-քսան քայլի վրայ պարապ կանգ-  
նած մի սպասաւոր արագութեամբ մօտեցաւ մեր  
սեղանին, և բժիշկը պատուիրեց նրան, որ մի բա-  
ժակ բերի: Գարեջրի շիշն արդէն զրուած էր սե-  
ղանի վրայ:

Նայեցի Քալիին. Խեղճը նստած էր ուղղակի  
ամօթահար, առանց ձայն-ծպուտ հանելու: Գլուխն  
այնքան կախ էր արիւ, որ լայնեզր ծղոտէ գլխար-

կի տակից հազիւ երևում էր դէմքի կէսը քթից  
ներքև:

Քրոջ շփոթմունքից և իմ սառնութիւնից բժիշ-  
կըն, ըստ երեոյթին, հասկացաւ, որ իւր ակնարկու-  
թիւնը շատ անտեղի էր և ամեն կերպ աշխա-  
տեց իւր սխալն ուղղել, ուրիշ բաների մասին փոր-  
ձեց խօսել, բայց նրա ջանքերն ապարդիւն անցան:  
Քրոջ շփոթմունքը չէր անցնում, ընդհակառակը,  
հետզհետէ աւելանում էր: Իսկ ես, որքան բժիշկն  
աշխատում էր սիրտս շահել, այնքան ես դիտմամբ  
սառն էի ձևացնում ինձ: Նրա ակնարկութեան մէջ  
իսկապէս վերաւորական ոչինչ չկար, բայց ես ինձ  
վերաւորուած էի զգում և ուզում էի զգացնեմ նրան,  
որ ինձ ծաղրել ոչօրի չեմ թոյլ տալ: Իսկ որ նա  
ուզում էր, թէև բարեսրտութեամբ, ծաղրել ինձ,  
այդ պարզ էր ինձ ամար:

Բժիշկն, երևի, զգում էր, որ շատ անհամ  
զրուութեան մէջ է դրել իրեն և, գլուխն առժամա-  
նակ ռաւղ անելու համար, ներսդուլթիւն խնդրելով,  
վեր կացաւ և մօտեցաւ մի տիկնոջ ու պարոնի, ո-  
րոնք հէնց նոր մտան այգու հրապարակը և հեռուից  
զլուխ տուին նրան:

Ես ու Քալին մենակ մնացինք սեղանի մօտ:  
Կրկին անգամ նայեցի նրան: Նա իրեն այնպիսի  
դիրք էր տուել, որ կարծես թէ ուզում էր վերկե-  
նայ ու փախչի: Նա չէր նայում ինձ, բոպէ առ բո-  
պէ կարմրում և գունատում էր: Քրտինքը վրայ էր  
տուել ճակատին: Եւ որքան նա շփոթուում էր, այն-  
քան ես տիրապետում էի ինձ:

Երկար ժամանակ ես էլ, նա էլ բան չէինք խօ-

սում: Տրամագրութիւնս խիստ փոխուել էր. նորից զարթել էր ինքնասիրութիւնս, և տարօրինակ յամառութեամբ Քալիին աւելի, քան իւր եղբօրը, ուզում էի ցոյց տամ, որ ինձ հետ խաղալ ոչօրի չեմ թոյլ տալ:

— Թերեւս դուք կարողանաք բացատրել ինձ, օրիորդ, թէ այն ինչ ակնարկութիւն էր, որ ձեր եղբայրն արեց ինձ,— վերջապէս ասացի ես:

— Ես... ոչինչ չզիտեմ,— շշնջաց նա և թաշկիւնակով սկսեց սրբել ձակատը:

— Դուք այն էլ չգիտէք, թէ ինչո՞ւ ձեր հայրը գուրս արեց ինձ ձեր տնից:

Պատասխանելու տեղ նա դէմքը նորից ծածկեց իւր լայնեզր գլխարկի տակ:

— Ես երեխայ չեմ, ի հարկէ, ամեն բան հասկանում եմ,— շարունակեցի ես,— Իսկ ձեր մայրը չէր կամենում մինչև անգամ, որ Կոլեան գայ ինձ մօտ գասերի, որպէսզի... 2է որ ես գիտեմ, որ նա ձեզ սարսափելի անիծելիս է եղել...

Քալին սաստիկ կարմրեց:

— Ո՞վ ասաց ձեզ այդ,— շշնջաց նա:

— Կոլեան: Թող ապահով լինին ձեր ծնողները.— կարճ լուռութիւնից յետոյ վերին աստիճանի հանդստութեամբ աւելացրի ես,— երբէք ինձ զօրով ոչօրի վզովը չեմ փաթաթել, երբէք էլ չեմ փաթաթիլ... Ես ձեզ սիրում եմ: Երևի, այդ բանը նկատել է մինչև անգամ ձեր անտարբեր եղբայրը, որ մի քիչ առաջ իւր ակնարկութիւնն արեց: Բայց իմ սէրըն այստեղ ոչ մի նշանակութիւն չունի, եթէ... Ամեն բան ձեզանից է կախուած:

— Ես ինչ կարող եմ անել:

— Որտեղ իմ դրութիւնը: Ես այժմ բոլորովին չզիտեմ, թէ ինչ դիւր բռնեմ,— արդեօք յուսամ, թէ յոյս միանգամից կարեմ,— որովհետև չզիտեմ, դուք ինձ նոյնպէս... սիրում էք, թէ ոչ:

Հակառակ իմ սպասածին, նա իմ այս վերջին խօսքերի ժամանակ աւելի հանդիստ էր, քան թէ առաջ: Աչքերը շարունակ վայր թողած, նա ասաց հազիւ լսելի ձայնով.

— Դուք ինքնեզր ասացիք, որ մայրս անիծում էր ինձ...

— Այո, և դուք էլ լաց էիք լինում: Բայց այդ բանն ես բացատրել եմ նրանով, որ դուք զրպարտութիւն էք համարել ձեր մօր յանդիմանութիւնները, որ դուք ինձ չէք սիրում և որ...

— Ո՞չ,— եռանդով վրայ բերեց նա.— ես լաց էի լինում նրա համար, որ մայրս շատ վատ լեզու էր բանեցնում ձեր մասին: Իսկ ես... ես չէի կարող այդ սառնասրտութեամբ լսել...

— Որովհետև դուք շատ բարի էք... որովհետև դուք առհասարակ ոչ մի վատ խօսք չէք կարող սառնասրտութեամբ լսել, լինի այդ վատ խօսքն իմ մասին, թէ...

Քալին մինչև անգամ դայրացած ոտը խփեց գետնին:

— Ո՞չ,— աղաղակեց նա,— որովհետև... Վերջապէս ինչ էք ուզում ինձնից... որ ես էլ խոստովանուեմ, թէ...

Նա խօսքը չվերջացրեց և արագութեամբ շուռ եկաւ իւր աթոռի վրայ, որպէսզի շտանեմ դէմքը:

Իսկ այդ դէմքն ամբողջապէս կասկարմրեց:

Քայց հարկ էլ չկար, որ նա վերջացնէր իւր ասելիքը. ես արդէն հասկացայ նրան և խելացնոր ուրախութիւնից քիչ էր մնում, որ շնչասպառ լինէի: Վեր թուայ, ուզում էի առնեմ նրա ձեռքը և գծի նման համբուրեմ, բայց յանկարծ յիշելով, թէ որտեղ եմ, նորից նստեցի և այս անգամ զարմանալի վախկոտութեամբ նայեցի շուրջս:

Բժիշկը շատ հեռու չէր. երեսը մեր կողմն արած խօսում էր իւր ծանօթ պարոնի և տիկնոջ հետ:

Յաւական երկար ժամանակ մենք լուռ էինք: Աչքերս աննպատակ կերպով յածում էի շորս կողմս, բայց չէի վստահանում նայելու Քալիին. դզում էի, որ եթէ նայեմ, չեմ կարող տիրապետել ինձ և այնպիսի մի խելացնոր բան կանեմ, որ թոյլատրելի չէր կարող լինել:

Երբ մի փոքր լռքս ինձ հաւաքեցի, հարցրի կամաց, կարծես թարուն.

— «Վէրք հայաստանի»-ն կարդում եք:

— Վերջացրի, — նոյնպէս կամաց պատասխանեց նա և կարճ լուռութիւնից յետոյ հարցրեց. — Իսկ իմ թաշկինակը...

Պատասխանելու տեղ, ծոցիցս հանեցի նրա նուիրած թաշկինակը, որ պահել էի նոյնութեամբ, ինչպէս որ նուիրել էր, ցոյց տուի և դարձեալ ծոցս դրի:

— Մեր տանը ոչոք չգիտէ, — ասաց նա. — վիչերներն եմ կարել...

— Վախենում էիք:

— Մայրս շատ խիստ կին է: Եթէ իմանար, որ ձեզ համար եմ կարում, կըսպանէր ինձ:

— Լաւ, ինչո՞ւ համար, չեմ հասկանում: Մի՞թէ իմ մէջ որեւէ արատ է տեսել:

— Ձեր արատն այն է, որ դուք...

— Վարժապետ եմ — «քնձոտ վարժապետ»:

— Այո, — պատասխանեց նա և ժպտաց, բայց յետոյ սաստիկ տխրեց և աչքերը վայր թողեց:

— Ես այդպէս էլ գիտէի, — ասացի ես և, նրա տխրութիւնը տեսնելով, մի անհասկանալի գառնութիւն համակեց սիրտս: — Իսկ ձեր հայրը: Մի՞թէ նա էլ այդպէս խորթ աչքով է նայում վարժապետի վրայ:

— Նա էլ:

— Իսկ բժիշկը:

— Նրա համար միևնոյն է, նա ոչ մի բանում չի խառնուում:

— Իսկ դո՞ւք, — վերջապէս անհամբերութեամբ բացականչեցի ես: — Դո՞ւք ինչ էք ասում:

— Ե՛ս... ես ոչինչ չեմ կարող ասել:

Եւ վերին աստիճանի շփոթմունքից չիմացաւ ինչպէս անի, որ խուսափի հայեացքիցս:

Ջգացի, որ գոյնս նետում եմ: Երկար ժամանակ այլևս բան չկարողացայ ասեմ. մէկը կարծես սեղմում էր կոկորդոս: Վերջապէս ինքս ինձ հաւաքեցի և խօսեցի խեղդուած ձայնով.

— Լոնցէք, օրիորդ: Այս ըոպէն թող վճռական ըոպէ լինի. ասացէք, կամենո՞ւմ էք իմ կինս լինել, թէ ոչ:

Նա տանջանքով դէմքը շրջեց ինձնից:

— Խնդրում եմ, ինձնից ոչինչ մի պահանջէք,

—հազիր լսելի ձայնով շշնջաց նա:

Այդ ընդհանր նա այնքան ողորմելի էր, որ մինչև անգամ կարեկցութիւնս չչարժեց, այլ—կատաղութիւնս:

—Հապա սեմից պահանջեմ,—աշխատեցի ասել կարելոյն շափ հանգիստ կերպով, բայց զգացի, որ արդէն դողում եմ:

—Ծնողներիցս...

Ձեռքս յանկարծ այնպիսի կատաղութեամբ խփեցի սեղանին, որ վրան դարսած շիշն ու բաժակները խաղացին զընդզընգալով:

—Դուք փալաս էք ուրեմն,—գրեթէ ազդագեցի ես ինքս ինձ կորցրած:

Այստեղ արդէն մի կատարեալ սկանդալ պատահեց: Քալին յանկարծ այնպէս վախեցաւ, որ ճշաց և իսկոյն վեր թռաւ տեղից: Մի քանի հոգի, որ հեռու-մօտիկ նստած էին սեղանների մօտ, հետաքրքրութեամբ նայեցին մեր կողմը: Մի ընդհանրացած՝ տեսայ, որ առաջս կանգնած է Քալիի եղբայրը:

—Ի՞նչ պատահեց,—անհանգստութեամբ հարցրեց նա:

Վեր կացայ տեղիցս:

—Ես վիրաւորեցի ձեր քրոջը և ներողութիւն եմ խնդրում: Իսկ եթէ չէք կամենալ ինձ ներել, ես պատրաստ եմ գոհացում տալ ձեզ ամեն բանով, ինչով որ կամենաք:

—Ձեր գոհացում տալն այն կըլինի, որ մեզ ազատէք ձեր ներկայութիւնից,—գոսպած զայրացկոտութեամբ ասաց նա:

Նա զայրացած էր, ըստ երևոյթին, ոչ թէ այն բանից, որ սկանդալիւս գրութեան մէջ էի գրել իւր քրոջն այդ հրապարակական տեղում, այլ նրա համար, որ շրջապատող մարդկանց ուշադրութեան առարկայ էր դարձել մեզ հետ և ինքը:

Առանց նրա ասելու էլ, ի հարկէ, աւելորդ էր իմ մնալս նրանց մօտ և ես, դարձեալ ներողութիւն խնդրելով, հեռացայ նուստացած, ամօթահար:

Հետեւեալ օրը հետեւեալ նամակը գրեցի Քալիին ուղարկելու համար.

«Օրիորդ.

«Երբէք չպիտի հանգստանամ, մինչև որ իմանամ, որ դուք ներում էք իմ երեկուայ խելացնոր վարմունքը: Իսկ եթէ չներէք, չեմ իմանում, ճշմարիտ, ինչ կըպատահի ինձ: Ես տանջւում եմ, ես յուսահատուած եմ: Երեկուայ իմ վարմունքիս գիտակցութիւնը գժուեցնում է ինձ: Ձեր հրեշտակային ներողամտութիւնը մի կատարեալ երջանկութիւն կըլինի ինձ համար: Անհամբերութեամբ սպասում եմ ձեր պատասխանին»:

Նոյն օրնեկէ յայդ նամակը տուի Կոլեային և ասացի, որ քրոջը յանձնի: Երկիւղ շունէի, որ նամակս կարող էր ընկնել Քալիի ծնողների ձեռքը, որովհետև նախ՝ մէջը, իմ կարծիքով, մի այնպիսի բան չկար, որ նրանց տեսակէտից դատապարտելի լինէր, երկրորդ՝ Քալիի ներողամտութիւնը ստանալուց յետոյ, որի համար ոչ մի տարակոյս չունէի, հաստատապէս վճռել էի մի օր գնամ նրա ծնողների մօտ և ուղղակի խնդրեմ նրանց աղջկայ ձեռքը, թէև, Մուշտայիդում իմ և Քալիի միջև տեղի ունե-

ցած խօսակցութիւնից յետոյ, նախապէս գիտէի, որ աջոգութիւն չպիտի ունենամ:

Անհամբերութեամբ սպասում էի Քալիի պատասխանին, որը յոյս ունէի ստանալու հետեւեալ օրը նոյն Կոլեայի միջոցով: Բայց որքան եղաւ դարմանքս ու սարսափս, երբ այդ օրը Կոլեայի տեղ սենեակս մտաւ Քալիի մայրը վերին աստիճանի գաղաղած: Առաջարան չկար, սկսեց ուղղակի վերջարանից: Նախ, մտնելուն պէս, նամակս շարտեց երեսիս, յետոյ իւր գարշելի վրացերէնով մի խիստ երկարատե ու փրփրալից ճառ արտասանեց, համեմուած բաւական զօրաւոր ածականներով իմ մասին: Որքան կարողացայ հասկանալ, նա այն մասին էր խօսում, թէ Խնչպէս ես, քնձոռտ «ուշխտելս», համարձակուում էի աչք ունենալ իրենց աղջկայ վրայ, Մուշտայի դուռ սկանդալ սարքել նրա գլխին, սիրահարական նամակներ գրել նրան և այլն, և այլն: Համոզուած լինելով, որ այդ կատարած կնոջը բան չպիտի կարողանամ հասկացնել (թէ և նա հայերէն խօսել չիմանալով, հայերէն բաւական լաւ հասկանում էր), աւելի լաւ համարեցի մինչև վերջը լռութիւն պահպանել, այնպէս որ նա խօսեց, խօսեց, վերջն էլ կարծեմ, ինչ-որ սպառնալիքներ կարգաց ու հեռացաւ:

Այստեղ ես կարող էի վերջացնել իմ պատմութիւնը, եթէ ինձ վիճակուած չլինէր յետագայում նորից հանդիպելու Քալիին այնպիսի պարագայում, որն այն ժամանակ ինձ ուղղակի գժուեցրեց, բայց որի հետ այժմ ես հաշտուել եմ:

Անհրաժեշտ եմ համարում այդ հանդիպման

մասին էլ գրել պատմութիւնս լրացնելու համար:

XI.

Վեց տարի էր անցել:

Այդ վեց տարուայ ընթացքում հայ ուսուցչի անհատաւոր վիճակը թիֆլիսից ինձ գարձեալ պաւաններն էր ձգել:

Ամառուայ արձակուրդներին եկել էի թիֆլիս իմ և հոգաբարձութեան միջև ծագած մի վէճի համար:

Մի անգամ փողոցով անցնելիս հանդիպեցի «պլանիցի» կնոջը: Խիստ զարմացայ: Իւր երեք որդոց մահից յետոյ կարծում էի, որ նա «Քուռը կլինէր ընկած խեղդուած», բայց նա այդ օրից վեց տարի անցնելուց յետոյ էլ որ ու առողջ կանգնած էր առաջս: Սակայն այժմ նա այնքան փոխուած էր, որ հազիւ ճանաչեցի. աւելի կմտորացած, աւելի կզացած, նա այժմ ուղղակի պատուի էր նմանում լուր սև հնամաշ հագուստի մէջ:

— Ի՞նչպէս էք, տիկին: Ինչքան փոխուել էք:

— Է՛, եղբայր.— հառաչեց նա, — ուրիշը լինել իմ տեղ, մինչև հիմա հազար պատանիք կը մաշէր:

— Այո, դուք շատ դժբաղդ էք: Ձեր տմուսինն ինչպէս է: Ելի խմում է:

— Նա մեռաւ:

— Մեռաւ... երբ, ի՞նչ էք ասում:

— Անցեալ տարի:

Նրա ձայնը ոտտոխիկ դողաց: Առանց շտապելու

զրպանից հանեց մի սպիտակ կեղտոտ թաշկինակ և սեղմեց աչքերին:

Ապշեցի: Մի՞թէ այն գաղանի համար էր լսցիլնում:

—Մի զարմանաք, որ ես արտասուք եմ թափում նրա համար,—ասաց նա հեկեկալով:—Ինչ էլ որ էր, էլի իմ ամուսինն էր, իմ հարազատը...

Յետագայ հարցումփորձերից իմացայ, որ «պիտանիքը» մեռել էր սպիտակ տենդից, հիւանդանոցում:

—Ուրեմն այժմ բոլորովին մենակ էք մնացել:

—Բոլորովին մենակ:

—Ո՞ր է պահում ձեզ, ինչով էք ապրում:

—Թո՛ղ եմ գրում, լուացք եմ անում, սոսքրակներ եմ կարում և մի կերպ կառավարում եմ:

—Էլի այնտեղ էք ապրում:

—Ո՞րտեղ, այն տանը: Ոչ: Որդոցս մահից յետոյ մի տարի մնացինք այնտեղ, յետոյ դուրս արին: Այն մի տարին էլ որ մնացինք, այդ էլ նրանց ազջկայ շնորհիւ էր: Չատ բարև աղջիկ է. նա էր, որ մխիթարում էր ինձ: Ափսոս չէ, որ նա այնպիսի հօր ու մօր սրդի է: Տեղնուտեղը հրեշտակ է. Այժմ էլ մենակ նա է, որ օգնում է ինձ. շատ անգամ կերակուր, շաւր, փայտ, երբեմն էլ փող է ուղարկում ինձ համար:

Խօսքը Քալիի մասին էր: Լսում էի ազահարար: Հասկանալի է, թէ ինչու:

Ամբողջ վեց տարի էր, որ նրանից ոչ մի տեղեկութիւն չստէի: Այժմ անախկալ կերպով գտել էի մի անձնաւորութիւն, որը կարող էր ինձ մանրամասն տեղեկութիւններ հաղորդել նրա մասին: Ու-

գում էի հարցնեմ ամուսնացած է,—լեզուս շէք գորում: Վարկենում էի, որ զբաղան պատասխան տար: Բայց նա, կարծես մարինո գուշակելով, ասաց.

—Ափսոս, հաղար ափսոս, որ իրեն արժանի մարդու չտաւին. բոլորովին ազէտ, պառու, լայց հարուստ գինեկաճառ է, սղնախեցի:

—Տղէտ, պառու, գինեկաճառ,—կրկնեցի ես կայծակնահար:—Եւ Քալին համաձայնեց այդպիսի մարդու կի՛նը լինել:

—Ի՞նչ անէք խեղճ աղջիկը, նա այնպիսի ծնագներ ունի որ... մանաւանդ մայրը:

Էլ բան չհարցրի, թողի ու փախայ. ստրտափում էի ուրիշ մանրամասնութիւններ լսեմ:

«Տղէտ», «պառու», «գինեկաճառ»—այդ խօսքերը շէին հեռանում մտքիցս:

Որ ասեմ, թէ դեռես արում էի Քալին—չէ, սէրս կամոց-կամաց սառել էր այն օրից, երբ միանգամայն յայտ կարեցի, որ նա իմ կինս լինելու չէ: Ուրեմն նրա ամուսնութեան լուրն առնելիս ինձ այսպէս սաստիկ ազդողն այն շէք, որ Քալին այժմ արդէն հաստատապէս կորած էր ինձ համար, այլ այն, որ ես միանգամից թափանցեցի իրերի գրութիւնը: Իսկ իրերի գրութիւնը հետեւեալ կերպով էր ներկայանում իմ աչքին.—Քալին, լաւ թէ վատ, միջնակարգ կրթութիւն ստացած, կուլտուրայի շաւղի վրայ գրուած ինտելիգենտ աղջիկ էր. քիչ թէ շատ նա հետաքրքրում կամ գտնէ սկսել էր հետաքրքրուել զբաղանութեամբ, ազգային և հասարակական խնդիրներով: Եւ յանկարծ այդպիսի մի աղջիկ կին էր դարձել մի պառուս, ազէտ գինեկաճառ-

ուի: Այդ ինչ դարհուրելի կենակցութիւն պիտի լինէր այդպիսի մի այջկայ համար: Ինչի՞ մասին պիտի խօսէին նրանք իրար հետ, ինչպէս պիտի հասկանային իրար, ինչպէս պիտի համակերպէին իրենց հասկացողութիւնները, իրենց հայեացքները, իրենց ճաշակը, զգացումները, հակումները... Կարելի ըսն էր միթէ միայնել երկու հակառակ բնեւորներ...

Որ այդ ամուսնութեան մէջ մեղաւորը Քալիի ծնողներն էին, դա լոյսի պէս պարզ էր ինձ համար. բայց ինձ վերին աստիճանի դարմայնում էր այն հանգամանքը, թէ միթէ Քալիի մէջ չկար ինքնուրոյնութեան, ազատասիրութեան մի կայծ անգամ, որ զիմադրէր իւր ազէտ ծնողների ստիպմունքին: Հասկա էլ ինչ բանի էր պէտք նրա ստացած կրթութիւնը: Իսկ չէ՞ որ կրթութեան այժը հէնց այն է, որ մարդու մէջ ամենից առաջ ինքնուրոյնութիւն է դարձեցնում, բարոյապէս ինքն իւր տէրն է դարձնում նրան: Նա կամրի այնքան ոյժ չունեցաւ, որ զիմադրէր իւր ծնողներին իմ վերաբերմամբ, թէկէ սիրում էր ինձ. բայց միթէ նա կամրի այնքան ոյժ էլ չունեցաւ, որ մերժէր իրեն բոլորովին անհամապատասխան մարդու ձեւքը: Գրա համար հօ կախաղան չէին հանիլ նրան:

Ուրեմն ճիշտ էր իմ նրա երեսին շարտած խոսքը. — նա վաշաւ էր, անհատականութեան, ազատասիրութեան զգացումից զուրկ մի արարած, մի խօսքով—մի տիտղան հայ այջիկ, որի մէջ ուսումը, կրթութիւնն ամեն բան փոխում է, բացի ստրկական ոգուց: Եթէ այդ ստրկական ատելի ոգին արմատացած չէր նրա մէջ, հասկա էլ ո՞ր դէպ-

քում պիտի արտայայտուէր, եթէ ոչ ամուսնութեան ինդրում,—մի խնդիր, որը ոչ թէ միայն իրեն ամուսնացողի, այլ և իւր բոլոր սերնդի ամբողջ յետագայ կեանքի հիմքն է դնում: Հօ չէր կարելի ընդունել, որ Քալին այդ շէր հասկանում իւր ձեւքը «տգէտ», «պառաւ» զինհիվանդան տալիս:

Այն, փայա՛ւ, փայա՛ւ, փայա՛ւ,—ուրիշ աւելի յարմար անուն ևս չունէի Քալիի համար:

Այժմ ևս արհամարհում էի նրան. եթէ նախկին սիրոյս աւերակներից մի-մի բեկոր գեւեւ մնացել էին սրտիս խօրքում թաղուած, զրանք էլ միանգամից փշրուեցան փոշի դարձան:

Եւ վճռեցի Քալիին առմիշտ հանել մտքիցս. նա այլևս գոյութիւն չունէր ինձ համար:

Բայց յետոյ ահա թէ ինչ բանի ակունտես եզայ,—մի բան, որ մի անգամ առմիշտ արմատացրեց մէջս Քալիի մասին կազմած համոզումս:

Նոյն ամառը, որ Թիֆլիս էի եկել և Քալիի ամուսնութեան լուրն առել, մի օր բարեկամներիցս մէկը հրուիրել էր ինձ իրենց սուն, հալարար: Հալարարն ընդանրապէս ինքն ըստ ինքեան Թիֆլիսի ամենակեղտոտ քաղաքամասերից մէկն է, իսկ բարեկամս այդ քաղաքամասի ամենայեա ընկած և ամենակեղտոտ փողոցներից մէկումն էր ապրում: Ամառուայ սօթ կանակին, երկկոյեան դէմ, նստած էինք դէպի փողոց նայող պատշգամբում, թէչ էինք անուշ անում և վայելում ամեն կողմից փշոզ դարչահատութիւնը: Ներքեր, կիսաքանդ մի ցածրիկ տան առաջ, ուղղակի փողոցի մէջ տեղում, զանազան ազտեղութիւններով ծածկուած մերկ գեւանի

վրայ նստած էին պառու և ջահել կանայք ամենանկարգ գրութեան մէջ և բարձրաձայն Աստուած գիտէ ինչի մասին խօսում: Փոքոցում ականջ խլացնող ճիշ ու ծղրատցով, անխոր հայհոյանքով վազվզում էին անթիւ երեխաներ գլխաբաց, բոկոտն, կեղտոտ:

Իմ և բարեկամիս խօսակցութեան նիւթն այդ կանայքն ու երեխաներն էին:

—Ի՞նչ ես կարծում,—ասում էր բարեկամս,—քանի սերունդ է հարկաւոր, որ կրթութիւնը կարողանայ փոխել այս արարածներին:

Այս խօսքերը միտս գցեցին Քալիին, և ես պատասխանեցի.

—Եթէ կարծում ես, թէ կրթութիւնը կարող է փոխել հայ կանանց,—չէ՞ որ սրանք բոլորն էլ հայեր են,—չատ սխալում ես:

—Ի՞նչպէս թէ...—զարմացաւ բարեկամս:

—Կրթութիւնը հայ կնոջ մէջ,—չարունակեցի ես,—փոխում է միայն արտաքինը, կեղեր, իսկ սպին նսյնն է մնում: «Կրթութեամբ» հայ աղջկայ հետ դու կարող ես խօսել մինչև անգամ Գարվինից, բայց որ նա լիովին ըմբռնի, թէ ինչ է նշանակում բնական ընտրութիւն և կարողանալ, առանց ծնողների թողալու թեան, հետևել այդ օրէնքին,—այդպիսի բան երբէք չսպասես:

—Ի՞նչ ես ասում, ո՞ւր թուար, ասածդ չեմ հասկանում,—բացականչեց բարեկամս:

Այս անգամ նա բոլորովին զարմացած էր ոչ թէ իմ խորհրդաւոր խօսքերից, այլ այն բանից, որ այդ խօսքերն արտասանելիս մէջս նորոգուել և ա-

կամայ արտայայտում էր դէպի Քալին տածած դայքոյթս:

Հարկ չկար ծածկելու նրանից իմ և Քալիի միջև եղած յարաբերութիւնները, և համառօտակի պատմեցի նրան պատահած բոլոր դէպքերը:

—Ա՛, ահա թէ ինչ բանից ես դադուած,—բացականչեց բարեկամս ծիծաղելով:—Հայ աղջկանց մեղադրելու փոխարէն քեզ մեղադրես, որ քնձուտ վարժապետ ես, իսկ վարժապետին ես էլ իմ ազբատ տեղովս աղջիկ չեմ տալ, ուր մնաց...

Բայց ես այլ ևս չէի լսում նրան. ուշադրութիւնս յանկարծ գրաւել էին երկու կին, որոնք հէնց այդ միջոցին երևացին փողոցի ծայրին և մեր կողմն էին գալիս: Նրանցից մէկը պառաւ էր, այնքան պառաւ, որ մէջքից երկու տակուել և հագու էր կարողանում շարժել ստները: Միսը... Թուրս դէմքից և ժպտող կրակոտ աչքերից միայն ճանաչեցի, որ նա Քալին էր, մինչդեռ իսկապէս ոչինչ չկար նրա արտաքինի մէջ ինձ նախկին Քալիին յիշեցնող: Նա այնքան շաղապել էր, որ կզակի տակ մի կզակ էլ էր գոյացել: Հասակը կարծես թէ աւելի բարձրացել էր: Առաջին հայեացքից 30—40 տարեկան կնոջ էր նմանում. Գլխին շիխախ-կօպի ունէր, թշերի երկու կողմը ուղբած հարուստ, սև կուէքներով: Հագնուած էր հարուստ, բայց բաւական անփոյթ և անճաշակ կերպով: Ի՛սկը գլխնվաճառի կին: Նա առաջ էր ընկել, պառաւը,—երեի, սկեսուրը,—յիտ էր մնացել:

Սպասում էի, որ նրանք պէտք է անցնէին մեր պրետզամբի տակով: Սիրտս դողում էր. չէի իմա-

նում, թէ ինչ պիտի պատահէր, երբ նա վերև նայէր և տեսնէր ինձ: Բայց սպասածս չիրականացաւ. նրանք մտան բարեկամիս տնից մի քանի տուն հեռու գտնուող մի աղքատ ցածրիկ խրճիթ: Այդ բանն այնքան տարօրինակ թուաց ինձ, որ տեղնուտեղս սպաշած մնացի:

— Ի՞նչ պատահեց, ի՞նչ բանի ես նայում,—  
զարմացաւ բարեկամս:

— Իսէր Աստուծոյ, ասա ինձ, ո՞վ է կենում  
այն խրճիթի մէջ,—բացականչեցի:

— Այն երկու կանայք որ ներս մտան այս բո-  
պէիս:

— Այո:

— Մի գրբաց կին:

— Գրբ-բաց...

— Հա, ինչո՞ւ ես զարմանում որ...

— Գրբաց ասում ես:

— Կարծեմ, ես չիմարէն չեմ խօսում:

— Կարելի բան է միթէ...

— Ի՞նչը չի կարելի. որ այն խրճիթի մէջ գրբ-  
բաց կին է ապրում: Ի՞նչ անի խեղճը, աղքատ է:

— Տօ, ախր այն նա էր,—գրեթէ ազդակեցի  
ես:

— Ո՞վ:

— Քալին:

— Ճիշտ, ի՞նչ ես ասում: Ո՞րը, այն բարձրա-  
հասակը:

— Այո:

— Անկարելի բան է...

— Աստուած է վկայ, նա էր, երկինքը վկայ,

նա էր: Չնայելով, որ նա բոլորովին փոխուած է,  
բայց ես իսկոյն ճանաչեցի, որ նա է:

— Բայց նա գրբացի մօտ ի՞նչ ունի:

— Ես էլ այդ չեմ զարմանում... Բայց ո՞չ,—  
յանկարծ փրփրացի ես,— ես չպէտք է զարմանամ,  
ոչ մի պայմանով չպէտք է զարմանամ: 2<sup>օ</sup> է որ ես  
ճանաչում եմ նրան. նա վարում է հետեղականու-  
թեամբ. նա ամենին չի շեղում, նա այդպէս էլ  
պէտք է անի, ուրիշ կերպ չի կարող անել: Նա կ-  
կել է գրբացի մօտ, անշուշտ, նրա համար, որ կամ  
վատ երազ է տեսել, կամ որդին հիւանդ է: Օ՛,  
այժմ ես բոլորովին ճանաչում եմ նրան և այնպէս  
կատարեալ կերպով պատկերացնում եմ նրա ընտա-  
նեկան կեանքը: Ամենից առաջ նա տանը խօսում է,  
ի հարկէ, վրացերէն, որովհետեւ մարդը սղնաղեցի  
է. օտար տղամարդու երես տեսնելիս, ներս է վա-  
զում ու դուռը փակում. թատրոն և հասարակական  
այլ տեղեր այլևս գոյութիւն չունին նրա համար.  
Նրա գնալը տեղը Թամամչևի քարվանսարան է և  
եկեղեցին: Գիրք ասուած բանն իսպառ մոռացուած  
է: Երբոր երեխան տունն աւելում է, ասում է հիւր  
կըգայ: Երբոր ձախ տկանջը ծուռ է, ասում է վատ  
համբաւ կըսեմ և այլն, և այլն—ճիշտ այնպէս, ինչ-  
պէս այս փողոցում թափթփած կանայք: Տարբե-  
րութիւնն այն է, որ նա լաւ ուտելու և լաւ հագնե-  
լու միջոցներ ունի իւր հարուստ մարդու շնորհիւ:  
Տեսնում ես, եկել է գրբացի մօտ: Ի՞նչ է նշանա-  
կում այս: Մտածում ես—ինչ է նշանակում այս...  
Մի խօսքով—մնաս բարեաւ կըթուլիւն, առաջադի-  
մութիւն, մեր ի ծնէ նախնեքի համար դուք ան-


դօր էր: Գէպի յետ, դէպի նախապաշարում, դէպի  
խաւար...

Երևի խիտա պափոտով էի արտատանում ֆի-  
լիպպիկներս, որ մէկ էլ տեսնեմ բարեկամս բար-  
ձրաձայն ծիծաղում է:

— Էրուած սրտին և այլն...— ասաց նա, ջրդ-  
բացնելով:— Գաղուած մարդ ես, ուրիշ ի՞նչ ճար ու-  
նիս, որ այդպէս շխտես:

— Այո, գաղուած եմ և ինչպէ՞ս գաղուած: Ե-  
թէ նա իմ կինը լինէր, գրբացների դռները կը-  
մանգար...





«Ազգային գրադարան»



NL0352722

«Ազգային գրադարան»



NL0352721

46.248

46.249

891.99

h-40